Ազգ
AZG
armenian newspaper

Մայիս 16
1992
Շաբաթ

Եռօրեայ թերթ
Բ տարի, թիւ 37 (129)
գինը 95 կ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 SULA SU

Հայկական մետաղադրամները պատրաստելու են ֆրանսիացիները

Լավատեղյակ աղբյուրներից «Ազգ»ին հայտնի դարձավ, որ մայիսի 14-ին Երեւանում պայմանագիր է ստորագրվել ՀՀ ֆինանսների նախարար Ջանիկ Ջանոյանի եւ Ֆրանսիայի էկոնոմիկայի եւ ֆինանսների նախարարության մետաղադրամների եւ մեդալների բաժանմունքի տնօրենի տեղակալ Տ. Լամբերտի միջեւ, ՀՀ ազգային մետաղադրամներ կտրելու վերաբերյալ:

Ֆրանսիական կողմը առաջիկա ամիսներին Հայաստանի համար պատրաստելու է շուրջ 200 միլիոն մետաղադրամ, որոնց տասական միավորները՝ լումա, իսկ հարյուրականները դրամ են կոչվելու, ըստ ՀՀ ԳԽ-ի համապատասխան որոշման:

Ըստ պայմանագրի, հայկական կողմը այդ աշխատանքների համար ֆրանսիացիներին պետք է վճարի շուրջ 5 միլիոն դոլլար: ■

ԼՂՀ կառավարության հայտարարությունը

Մայիսի 15-ին ԼՂՀ-ի կառավարությունը հանդես է եկել հայտարարությամբ, որի մեջ մեղադրում է Ադրբեջանին Ղարաբաղի շրջափակումը սաստկացնելու եւ բնակավայրերը շարունակ հրետակոծելու մեջ: Փաստաթղթում նշվում է, որ Բաքվի այդ գործողությունների արդյունքում խախտվել է կապը արտաքին աշխարհի հետ: ԼՂՀ-ում սով է սկսվել, կա համաճարակի տարածման փաստեր: ԼՂՀ-ի կառավարությունը դիմել է Բաքվին, ԵԱՀԽ-ին եւ ՄԱԿ-ին՝ պահանջելով դադարեցնել ինքնիշխան ԼՂՀ-ի շրջափակումը եւ խաղաղ բնակչության դեմ զանգվածային ոչնչացման տարբեր տեսակի զենքերի օգտագործումը: Շրջափակման հետեւանքների եւ լարվածության հետագա ծավալման հետեւանքների պատասխանատվությունն ընկնում է Ադրբեջանի ղեկավարության եւ համաշխարհային հանրության վրա, նշվում է հայտարարության մեջ: ■

Գրադի հարվածից խփվեց Յակ-40-ը

Երեկ Ստեփանակերտի օդանավակայանում խփվել է Յակ-40 օդանավը, որը մարդասիրական օգնություն էր բերել Ղարաբաղ: Օդանավն ամբողջովին այրվել է, ծանր վերքեր եւ այրվածքներ են ստացել 10 մարդ, որոնցից մեկը մահացել է:

Հայերը ռազմական ուղղաթիռ են խփել

Ինչպես հաղորդեց Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլի կենտրոնը, հայկական կազմավորումները լայնածավալ հարձակում են գործել Հայաստանի հետ սահմանամերձ Լաչինի, Ղուբաթլիի եւ Ղազախի շրջանների գյուղերի վրա, ինչպես նաեւ շարունակել են հարձակումը Լաչին քաղաքի վրա: Հաղորդագրության մեջ նշվեց, որ հարձակմանը մասնակցում են նաեւ Հայաստանում տեղակայված ԱՊՀ միացյալ զինված ուժերի 7-րդ բանակի ստորաբաժանումները: Մամուլի կենտրոնի տվյալներով, Լաչինի հրետակոծման արդյունքում կան բազմաթիվ զոհեր:

Բաքվից ստացված տեղեկության համաձայն, Ադրբեջանի ընդդիմության որոշ ներկայացուցիչներ կարծում են, թե Ռուսաստանի ղեկավարությունը կարող է Ադրբեջանին ռազմական աջակցություն ցույց տալ Այազ Մութալիբովի իշխանությունն ամրապնդելու նպատակով:

Մինչդեռ, Երեւանի իրազեկ աղբյուրները հաղորդեցին, որ մայիսի 14-ին հրետակոծվել է Ստեփանակերտի օդանավակայանը, Մարտունին եւ Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր: Նույն աղբյուրների համաձայն, երեկ առավոտյան Մարտունու շրջանում հայերը խփել են Մի-24 ռազմական ուղղաթիռը, որը ռմբակոծում էր շրջանի գյուղերը: ■

Ոչնչացվեցին ադրբեջանցիների կրակակետերը

Մայիսի 15-ի վաղ առավոտյան Լաչինի շրջանից ադրբեջանցիները հարձակվել են Գորիսի շրջանի Արամուս գյուղի պահակակետերի վրա եւ հակահարված ստանալով [illegible] Հայ մարտիկները ոչն[illegible] նահանջ[illegible] շրջակայքում չացրել են Արամուսի [illegible] գտնվող ադրբեջան[illegible]կան կրակակետերը: Վիրավորվել են 7 [illegible], ադրբեջանցիները տվել են 6 զոհ: ■

ՀԱՅԱՍՏԱՆՆ ՍՏՈՐԱԳՐԵՑ ԿՈԼԵԿՏԻՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Տաշքենդի գագաթաժողովը դրական գնահատվեց

Մայիսի 15. Տաշքենդ. մեր հատուկ թղթակից ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆԸ հաղորդում է.

Ընդամենը մեկ օր տեւեց ԱՊՀ երկրների ղեկավարների տաշքենդյան հանդիպումը, որը թվով 7-րդն էր: Այն Հանրակցության երկրներում հասունացող ճգնաժամին նոր լուծումների միջոցով նոր թափ հաղորդելու առաքելությունն ուներ:

Տաշքենդի Բարեկամության պալատում հավաքված 11 հանրապետությունների ղեկավարները եւ լիազոր ներկայացուցիչները գործնական մթնոլորտում քննարկեցին խորհրդակցությանը ներկայացված հարցերը:

Լրագրողներին խիստ հետաքրքրում էր մասնակիցների կազմը: Հատկապես մեծ աղմուկ բարձրացրեց այն փաստը, որ հանդիպմանը չէր մասնակցում Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկը, թեեւ ըստ նախապես ստացված տեղեկությունների՝ Ղրղզստանի, Տաջիկստանի, Մոլդովայի եւ Ադրբեջանի նախագահները նույնպես չէին մասնակցելու խորհրդակցությանը: Ադրբեջանի պատվիրակության կազմում էին փոխվարչապետ Ազիզբեկովը, պետխորհրդական Աբասովը, արտգործնախարար Սադըխովը: Նախագահներ Ելցինի, Տեր-Պետրոսյանի, Քարիմովի, Նիյազովի, Շուշկեւիչի, Նազարբաեւի, ինչպես նաեւ Ղրղզստանի փոխնախագահ Կուլովի, Մոլդովայի վարչապետ Մուրավսկու, Տաջիկստանի փոխվարչապետ Գաֆարովի, Ուկրաինայի վարչապետ Ֆոկինի եւ Ադրբեջանի փոխվարչապետ Ազիզբեկովի համատեղ աշխատանքները օրվա վերջում իրենց իսկ կողմից դրականորեն գնահատվեցին: Վրաստանը, որը ներկայացված էր դիտորդի կարգավիճակով (Միգուա, Կիտովանի), չմասնակցեց ոչ մի փաստաթղթի ստորագրմանը:

Հանդիպման սկզբում Բորիս Ելցինը Մոլդովայի եւ Ադրբեջանի վերաբերյալ ասաց, որ երբ մինչեւ մյուս հանդիպումը նրանց խորհրդարանները չհաստատեն Հանրակցության կողմից ընդունված պայմանագիրը, կզրկվեն նրա նիստերին անդամակցելու իրավունքից:

Հայաստանի պատվիրակությունը, որը գլխավորում էր նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը եւ որի կազմում էին փոխվարչապետ Հրանտ Բագրատյանը, արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանը, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, ԱՊՀ-ում Հայաստանի ներկայացուցիչ Սպարտակ Կոստանյանը, նախապես որդեգրել էր կայուն դիրքորոշում: Այդ առթիվ Րաֆֆի Հով-

Շարունակությունը էջ 8 ➪

ՄԱԿ-ը հանում է զորքը Բոսնիայից

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին Բոսնիա-Հերցեգովինայում տեղակայված կապույտ սաղավարտավորներին հրահանգ տվեց հեռանալ այնտեղից, նկատի ունենալով, որ շրջանը շատ է վտանգավոր խաղաղապահ որեւէ առաքելություն իրականացնելու համար: Իր հերթին, ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը սեփական զորագնդերից պահանջեց դուրս գալ Բոսնիայից: ■

ՌԱԿ կենտրոնական վարչության ատենապետ դոկտ. Արշավիր Գյոնջյանը ժամանեց Երեւան

Մայիսի 14-ին Փարիզի վրայով Կանադայից Երեւան ժամանեց ՌԱԿ Կենտրոնական վարչության ատենապետ դոկտ. Արշավիր Գյոնջյանը: Նա մասնակցեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդրանիկ նիստին: ՌԱԿ-ի ղեկավարը տեսակցություններ կունենա Հայաստանի Հանրապետության պետական եւ հոգեւոր ղեկավարների եւ քաղաքական շրջանակների հետ: Արշավիր Գյոնջյանը ժամանման օրն իսկ մասնակցեց ՀՌԱԿ Հանրապետական վարչության հերթական նիստին: ■

Մութալիբովը մեկ ամսում երկու անգամ կորցնում է իշխանությունը

Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում, որ սաստկանում է հակամարտությունը իշխանությունների եւ ընդդիմության միջեւ, երեկ երեկոյան հրաձգություն է սկսվել: Որոշ տվյալների համաձայն, օդ են կրակում առանց համարանիշերի ավտոմեքենաներից: Ընդդիմության կարծիքով, դա Այազ Մութալիբովի կողմնակիցների *«սադրիչ գործողություններն են»*:

Ինչպես «ԻՖ»-ին հաղորդեց նախագահի մամուլի ծառայության աշխատակից Ֆարհադ Մեհդիեւը, կրակոցներ են լսվում նաեւ Ադրբեջանի Գերագույն խորհրդի շենքի մոտ: Նա ոչ մի բացատրություն չտվեց, քանզի չգիտեր մանրամասները:

Ընդդիմության կողմնակիցները շարժվում են դեպի նախագահի առանձնատունը: Ցուցարարները տանում են հետեւյալ կարգախոսները. *«Կորչեն խռովարարները»*, *«Ժողովրդավարություն, ազատություն, անկախություն»*, *«Հայկական ագրեսիան Ռուսաստանի քաղաքականության հետեւանքն է»*: ԱԺՃ-ի գնահատականով, ցույցին մասնակցում են մինչեւ 500 հազար մարդ: Շարաայան շարժման ընթացքում միջադեպեր չեն գրանցվել: ԱԺՃ-ի ղեկավարները կոչ են անում Այազ Մութալիբովին խաղաղ ճանապարհով հրաժարվել նախագահական պաշտոնից: ԱԺՃ-ի տվյալներով, նախագահի առանձնատունը պաշտպանում է ԱՊՀ միացյալ զինված ուժերի զրահատեխնիկան:

Բաքվի կենտրոնում փաստորեն դադարեցվել է քաղաքային տրանսպորտի երթեւեկությունը:

Ըստ երեւույթին, միլիցիան նախընտրում է չմիջամտել իրադարձություններին:

Երեկ առավոտյան Ադրբեջանի ժողովրդական ճակատը վերջնագիր է ներկայացրել Այազ Մութալիբովին՝ պահանջելով հեռանալ նախագահի առանձնատնից: Հակառակ դեպքում, նրան դուրս կհանեն որպես *«ինքնակոչի, որը պետական հեղաշրջման արդյունքում ապօրինի զբաղեցրել է նախագահի պաշտոնը»*:

Ինչպես «ԻՖ»-ին հաղորդեցին Ադրբեջանի Ժողովրդական ճակատի մամուլի ծառայությունում, երեկ ժամը 22-ի մոտ, ընդդիմության կողմնակիցները ոստիկանության հետ կարճատեւ փոխհրաձգությունից հետո գրավել են նախագահական պալատը: Սակայն նախագահ Այազ Մութալիբովը շենքում չէր: Ավելի վաղ, ընդդիմությունը գրավել էր Բաքվի կենտրոնականորեն կարեւոր օբյեկտները, այդ թվում Գերագույն խորհրդի, հեռուստատեսության եւ ռադիոյի շենքերը, որտեղից եթեր դուրս գալով հայտարարվել է, որ Ժողճակատը ամբողջովին վերահսկում կացությունը: ■

Հինգ հայորդիների մահապատիժն այսօր, եթե...

Քրիստոնեական միջազգային համերաշխության կազմակերպության կողմից համաշխարհային հասարակությանը հղված ահազանգային հաղորդագրությունից իմացանք, որ այսօր, մայիսի 16-ին, ադրբեջանցիները պատրաստվում են մահապատժի ենթարկել արցախցի հինգ հայորդիներին, առանց արդար ու չեզոք որեւէ դատավարության:

Փաստաթուղթը կոչ է անում միջազգային հասարակությանը դիմել իրենց պատգամավորներին ու սենատորներին Սուիչբորդում տեղադրված 202-224-3121 համարով ձրի հեռախոսով, պահանջելով փրկել հինգ հայորդիների՝ Մկրտչյանի, Մանգասարյանի, Հարությունյանի, Պետրոսյանի եւ Առուստամյանի կյանքը:

Այս կապակցությամբ մեր թղթակիցը երեկ դիմեց ՀՀ ԳԽ-ի Մարդու իրավունքների պաշտպանության եւ ազգությունների հանձնաժողովի քարտուղար Աղասի Արշակյանին, որի պատասխանը տարակուսանքի մատնեց մեզ: Նա ասաց. «Էմնեսթի ինտերնեշընլ»-ի ներկայացուցիչները մեկնել են Բաքու, բայց առայժմ որեւէ տեղեկություն չունենք: Մենք տեղյակ չենք, թե արդյոք մահապատիժը վաղն է կայանալու»: ■

Ազգային պահակազորը դուրս է գալիս Լոս Անջելեսից

Լոս Անջելեսում տեղակայված Ազգային պահակազորի 10 հազար զինվորներից 4 հազարը հինգշաբթի օրը դուրս եկան քաղաքից, ուր երկու շաբաթ առաջ զանգվածային անհանգստություններ էին պատահել, որոնց հետեւանքով բազմաթիվ զոհեր, վիրավորներ, ձերբակալություններ ու ավերածություններ էին արձանագրվել: Բուշի վարչությունը երեկ որոշեց 600 միլիոն դոլլար տրամադրել վերականգնման աշխատանքների համար: Քաղաքի դատախազությունից երեկ հայտնեցին, որ ազատ արձակված 4 ոստիկաններից առնվազն մեկի նկատմամբ դատական գործը կվերահաստատվի: ■

Ֆիլիպինները դեռ հաշվում են քվեները

Անցյալ կիրակի Ֆիլիպիններում կայացած նախագահական ընտրությունների արդյունքները դեռեւս հայտնի չեն. համապատասխան մարմինները երեկ հայտարարեցին, որ քվեների հաշվումը դեռ շարունակվում է: Նրանք արգելեցին մամուլին վերջնական հաշվարկումից առաջ որեւէ բան հայտարարել այն մասին, թե ո՞վ է հաղթողը հակակաշառքային պայքարի առաջամարտիկ տիկին Մարիամ Սանտյագո՞ն, թե պաշտպանության նախկին նախարար Ռամոսը, վախենալով նրանց համակիրների միջեւ առճակատումներից: Այնուհանդերձ, Մարիամ Սանտյագոն երեկ ցույցի հրավիրեց իր համակիրներին, բողոքելու հաշվիչ հանձնաժողովների գործունեության դեմ: ■

ՄՈՒԹԱԼԻԲՈՎԸ ԿՐԿԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈՒԽ

Ռուսական կամակորությու՞ն, թե քաղաքական ստրատեգիայի փոփոխություն

Քաղաքական դիտորդների կանխատեսումն իրականացավ եւ նույնիսկ գերազանցեց սպասելիքները: Նախագահական ընտրությունները Ադրբեջանում ոչ միայն չկայացան, այլեւ ծայրահեղ արագությամբ իշխանության ղեկին վերադարձավ կարծես թե պատմության գիրկն անցած Այազ Մութալիբովը: Վերջինիս հայտարարությունները ԱՊՀ-ին Ադրբեջանի հավատարմության մասին իրադարձությունների կազմակերպչի վերաբերյալ կասկածների տեղիք չեն տալիս: Հստակվում են նաեւ արցախյան պատերազմում վերջին իրադարձությունների հիմնական պատճառներն ու նպատակները: Ռուսաստանն անցկացրեց մի գործողություն, որը պատիվ կբերեր նույնիսկ Արեւմուտքի զորեղ պետություններին: Փորձենք հնարավորության սահմաններում պատկերացնել իրավիճակը եւ գուցե հանգենք համապատասխան հետեւությունների: Նախ եւ առաջ, մեզ հետաքրքրում է, թե ո՞ր Ռուսաստանն էր ծրագրավորել եւ իրականացնում այս գործողությունը:

Տարբերակ առաջին. այն իրականացվեց Ելցինի գլխավորած դեմոկրատական կառավարության ուժերով, ուր գլխավոր դերը կատարում էին ԱՊՀ-ում պետական անվտանգության մարմինները կոորդինացնող մարմինը, արտաքին հետախուզության ապարատը, իսկ անհրաժեշտ ֆինանսական աջակցությունը ստացվում էր ռազմաարդյունաբերական համակարգում գործող կոմերցիալ կառույցներից:

Տարբերակ երկրորդ. Բակատինի, Պրիմակովի եւ Վոլսկու համապատասխան մարմինները գործում են ինքնուրույն, իրականացնելով իրենց շրջանակներում (նախկին ԽՍՀՄ իշխանության օրոք) ծրագրավորված խնդիրները, իսկ Ելցինը եւ կառավարությունը դրանց խոչընդոտելու անհրաժեշտ լծակները չունեն, եւ կամ դա իրականացվում է Ելցինի ու կառավարության լուռ համաձայնությամբ: Կարծում ենք, որ ճշմարտությունը գտնվում է այս երկու տարբերակների մեջտեղում:

Մեզ հետաքրքրող երկրորդ հարցը փոխհամաձայնության այն աստիճանն է, որը ձեռք է բերվել, մի կողմից, Ռուսաստանի եւ Թուրքիայի, մյուս կողմից՝ Ռուսաստանի ու ԱՄՆ-ի միջեւ վերջին իրադարձությունների կապակցությամբ: Մութալիբովի վերադարձը խախտում է մինչեւ այսօր իրականացվող քաղաքականության հիմքերը, կամ, համենայն դեպս, էական փոփոխություն է մտցնում դրանցում: Ադրբեջանում փաստորեն կասեցվեց ազգայնական հոսանքի՝ ժողովրդական ճակատի հաղթանակը, որն ուներ ընդգծված թուրքամետ բնույթ եւ կոչված էր ծառայելու թուրքական գոտու ստեղծման թուրք-ամերիկյան ծրագրի իրականացմանը:

Սա նշանակում է, որ ԱՄՆ-ի դիրքորոշման մեջ տեղի է ունեցել շրջադարձ, որը կարող է ժամանակավոր կամ արմատական բնույթ կրել: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա նա ամենայն հավանականությամբ դժկամորեն, բայց գլխիկոր ստիպված էր համակերպվել այդ փոփոխությունների հետ: Ինչո՞ւ:

Նախ, Թուրքիան բավական կրավորական արձագանք տվեց Շուշիի գրավմանը, իսկ Արեւմուտքը դրան նայեց մատների արանքով: Թուրքիայի սառնասրտությունը կարող է պայմանավորված լինել այն բանով, որ նա նախապես տեղեկացված էր այդ գործողության մասին եւ որոշակի երաշխիքներ էր ստացել, որ Շուշիի հանձնումը հայերին ժամանակավոր բնույթ է կրելու եւ ծառայելու է կոնկրետ նպատակի, որից հետո կվերականգնվի նախկին կարգավիճակը:

Երկրորդ, Թուրքիան պետք է որ երաշխիքներ ստացած լինի, որ անկախ իրադարձությունների զարգացումից՝ միջազգային ատյաններում չեն փոխվի մոտեցումները Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի նկատմամբ:

Երրորդ, հնարավոր է, որ Թուրքիան բացատրություն ստացած լինի ԱՊՀ-ի հարավ Ռուսաստանի ժամանակավոր վերադարձի անհրաժեշտության վերաբերյալ, ինչը կպատներ իրանական ազդեցության տարածումը եւ կրացոսի անկանխատեսելի փոփոխությունները շրջանում, իսկ իբրեւ փոխհատուցում Թուրքիան հավանաբար նոր վարկեր կստանա Արեւմուտքից եւ ավելի բարյացակամ վերաբերմունքի կարժանանա Եվրահամայնքի կողմից:

Առավել կարեւոր է ըմբռնել շրջանի նկատմամբ ԱՄՆ-ի մոտեցման մեջ տեղ գտած փոփոխությունը: Հավանաբար, ԱՄՆ-ը լուրջ կասկածներ ունի Ադրբեջանի եւ Միջին Ասիայի հանրապետությունների իսլամական ձեւով արեւմտականացման հնարավորության վերաբերյալ եւ ստիպված է առժամանակ սառեցնել ծրագիրը: Հնարավոր է, որ ԱՄՆ-ի կառավարական շրջանակները տեղի տվեցին Իրանի ազդեցության տարածման վտանգի առջեւ եւ Ռուսաստանի վերադարձը գերադասեցին թուրք-իրանական անկանխատեսելի մրցակցությունից: Հնարավոր է նաեւ, որ Արեւմուտքը կողմ է ռուսական ազդեցության վերականգնմանը, որովհետեւ անմիջական պատասխանատվություն չկրի Լեռնային Ղարաբաղի եւ Միջին Ասիայի արյունալի իրադարձությունների համար:

Կարծում ենք, որ այստեղ կարեւոր դեր է խաղում նաեւ ԱՄՆ-ում նախագահական ընտրությունների ժամկետների մոտիկության գործոնը եւ ներկայիս նախագահն ու նրա կուսակցությունը չեն ցանկանում տհաճ միջադեպեր ունենալ ընտրություններին նախորդող ժամանակաշրջանում: Երբ Ռուսաստանը նորից ակտիվ դեր խաղա շրջանում եւ, հատկապես, Լեռնային Ղարաբաղի խնդրում, ապա ԱՄՆ-ը կարող է վերադառնալ կողմնակի դիտորդի իր նախկին դիրքերին եւ նույնիսկ հնարավորություն կունենա դատապարտելու ռուս-ադրբեջանական գործողությունները ԼՂՀ-ի հայերի նկատմամբ, դրանով իսկ կշահի Կալիֆորնիայի հայ ընտրողների հազարավոր ձայները, ուր սեւամորթներն ու կորեացիները դժվար թե իրենց ձայնը տան ներկայիս նախագահին: Ինչեւիցե, Լեռնային Ղարաբաղի խնդրի լիակատար վերահսկումը Ռուսաստանի կողմից, վերադարձնում է այն իր ելակետային վիճակին եւ ԱՄՆ-ը կարող է համոզված լինել, որ որոշակի ժամանակահատվածում ո՛չ իր դաշնակից Թուրքիայի կողմից, ո՛չ իր հակառակորդ Իրանի կողմից Անդրկովկասում կոնկրետ գործողություններ չեն ձեռնարկվի եւ նա ստիպված չի լինի անհրաժեշտ, բայց անկանխատեսելի գործողությունների դիմել շրջանում:



Եթե առաջիկա օրերին Մութալիբովը պահպանի իր իշխանությունը ժողովրդական ճակատի ոտնձգություններից, ապա Ռուսաստանը որեւէ նշանակալից նվիրատվություն կանի նրան Լեռնային Ղարաբաղում: Դա կարող է լինել Շուշին, կամ Շուշիին համարժեք որեւէ տարածք: Նման քայլն անհրաժեշտ է, որպեսզի ամրապնդվի Մութալիբովի իշխանությունը, իսկ ժողովրդական ճակատին համակրող ժողովրդական լայն զանգվածները փոխեն իրենց դիրքորոշումը՝ տեղի տալով հաղթանակներից ծնվող ազգայնական փախուղին:

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Իջեւանից Տաուշ տանող ճանապարհն անցնում է սահմանագլխով, եւ Վազաշենից Պառավաքար գնալը համարվում է հերոսություն: Ու թեեւ այդտեղ բնությունն ի սկզբանե թշնամու օգտին է գործել, միեւնույն է, հայ մարտիկը անանցանելի անտառներում իր համար ճանապարհ է հարթել ու գտել հարեւան գյուղը հասնելու ելքը: Հենց այդ ճանապարհով էլ հասանք Պառավաքար: Գյուղում լռություն էր: Մեր մեքենան չկանգնեց: Ուղեկցող մարտիկները շտապում էին Ներքին Կարմիրաղբյուր: Վարորդ Սուրենը մեքենան կանգնեցրեց միայն այն խաչքարի մոտ, որն օրեր առաջ հարեւան գյուղի թուրքերը տապալել էին գետնին:

Տաուշ. «Թվում է, Հայաստանն արդեն գրավել են, մնացել ենք մենք»

Մոռացված գյուղ.
Ներքին Կարմիրաղբյուր

Մոտ 200 տարվա պատմություն ունեցող գյուղն այսօր ունի 300 տուն, 1100 բնակիչ: Մարտի 6-ից հետո, 3-5 կմ երկարությամբ ձգվող սահմանը դարձավ պատերազմի գիծ: Հաջալի, Մյուլքյուլու եւ Ալիբեյլի ադրբեջանական գյուղերը երեւում են դեռ Ն. Կարմիրաղբյուրի սարալանջերից: Ալիբեյլիի դիրքն այնպիսին է, որ միայն մի տանկի տեղաշարժով գնդակոծվում են Հայաստանի սահմանակից չորս գյուղերը՝ Պառավաքարը, Ներքին Կարմիրաղբյուրը, Այգեպարն ու Մովսեսը: Կարմիրաղբյուրի պահակակետերից պարզ երեւում են ե՛ւ թշնամու հրանոթները, կամ ինչպես այստեղ են ասում՝ թոփերը, ե՛ւ տանկերը, եւ մինչեւ անգամ լսվում են բարձրաձայն խոսակցությունները: Գյուղի ձախ կողմում թուրքերի կողմից հրի մատնված անասնապահական ֆերմաներն են: Երկու թշնամի գյուղերի միջեւ 500 հեկտարի վարելահողեր, պտղատու այգիներ են, որոնք պատկանում են Ներքին Կարմիրաղբյուրին, բայց անընդմեջ գնդակոծությունների պատճառով մնացել են լքված:

Գյուղում մեզ շրջապատեցին շտաբում հավաքված մարդիկ, իսկ գյուղխորհրդի նախագահ Էդիկ Սիմոնյանը, որը նաեւ շտաբի պետի պաշտոնակատարն է, միանգամից խոսեց գյուղի ու գյուղացիների ճակատագրի մասին:

Փաստորեն, կանանց ու երեխաների մի մասը տեղափոխվել են այլ շրջաններ եւ գյուղում մնացել են պաշտպանները ու նրանց հացտվողները: Նորից նույն խնդիրները, գարնան գյուղատնտեսական աշխատանքները կանգ են առել: *«Եթե այսպես շարունակվի, աշնանը սոված կմնանք»,* ասաց նախագահը: *Էլ չեմ ասում խեղճ անասունների մասին, որ ե՛ւ վիժում են, ե՛ւ կաթնատվությունն է ընկել: Մեզ պետք է պետական բանակ, որ գա մեր սահմանը պաշտպանի, մենք մեր հնարավորությունների չափ օգնենք, միայն թե կարողանանք հանգիստ աշխատել, բարիք ստեղծել, թե չէ այսպես երկար չենք դիմանա»:* Այնուհետեւ խոսք գնաց սեփականաշնորհման մասին, շատերը գտան, որ սահմանամերձ շրջաններում այն վաղ սկսեցին եւ հիմա այնպես է ստացվում, որ ավելի ապահով հողատարածքների տերերը կմեծանան եւ բերք կստանան, իսկ ումը սահմանագծի մոտ է, կնստի դատարկ տաշտակի առջեւ: Հաջորդ թեման ծխախոտն էր: Նախկինում Խ. Միության ծխախոտի 3 տոկոսը Տաուշի շրջանն է տվել, իսկ հիմա գոնե մի տուփ ծխախոտ չեն ուղարկում գյուղ: Փոխարենը, շրջանային համապատասխան հիմնարկի տնօրենը, որի անունն այդպես էլ չիմացա, ասել է, թե ծխախոտ կտա միայն այն դեպքում, երբ դրա հետ որպես վերադիր նաեւ ինչ-որ «չիրացվող» պահածոներ գնեն, ըստ երեւույթին դրանք փամփուշտների տեղ օգտագործելու նպատակով: *«Մեր հանձնած ծխախոտի փոխարեն թող պետական գներով ծխախոտ բերեն,* բողոքեցին գյուղացիները: *Ինչու պետք է դրանք շրջկենտրոնում կամ էլ Երեւանի սեւ շուկաներում 15 ռուբլով վաճառեն»:*

Հերթը հասավ պաշտպանությանը: *«Ողջ գյուղն արդեն քանդել են, մոտ 100 տուն ավերվել է,* ասաց Համլետ Միրզոյանը: *Մի նորմալ զենք էլ չունենք, որ կռվենք: Թոփերը գյուղի վերեւում են, իսկ 10-15 ավտոմատով տանկի ու զրահամեքենայի դեմ կռվել կլինի՞: Մինչեւ վերջերս էլ, Երեւանում պաշտպանության կոմիտեում չկարողացանք համոզել, որ մեր գյուղը սահմանակից է Ադրբեջանին: Նոր քարտեզ ենք բերել մայրաքաղաքից, գյուղի տեղը կա, անունը չկա: Թվում է, թե մեզ ոչ միայն մտքից են հանել, այլեւ ջնջել քարտեզից»:*

Մարտիկները պատմեցին նաեւ, թե տարիներ շարունակ հավաքված վերջին խնայողությունները ինչպես են հանում եւ մի կերպ զինամթերք գնում: Մարդիկ արդեն սնանկանում են, քանի ամիս է աշխատավարձ չեն ստանում, ապրում են եղածի հաշվին:

Գյուղի պահակակետերում հսկող ջոկատներից յուրաքանչյուրում 10-15 մարտիկ կա, բոլորն էլ ներքին կարմիրաղբյուրցիներ, մի քանիսը երեւանաբնակ: Առաջին պահակակետի այդ օրվա հերթափոխի հրամանատար Հայկազ Ադամյանը նեղացած ասաց, թե *«գյուղի սահմանը միայն մերը չէ, այլ ողջ հանրապետությանը, իսկ երբ դիմադրությունն այստեղ ընկնի, ապա թշնամին մինչեւ Սեւան կհասնի»:* Գյուղում չկան ո՛չ հակաօդային, ո՛չ հակատանկային միջոցներ: Գյուղացիք գոնե մեկ տանկ են ուզում, բայց դա էլ չեն տալիս: *«Փոխարենը,* ասացին նրանք, *պաշտպանության նախարարը հեռուստատեսությամբ*

Պոլիկլինիկաներում կաթ ու մանկական սնունդ

Ուրեմն, սկսում ենք հերթով թակել դռներն այն միամիտ հույսով, որ ինչ-որ մեկն անկեղծորեն կխոստովանի, թե ինչո՞ւ է, որ նորածինների մայրերին ամենուր ու անընդհատ ասում են. «Չունենք, չկա՛», իսկ սեղանիկների վրա արեւի տակ փչանում ու աղեստամոքսային հիվանդությունների անսպառ աղբյուր են դառնում 80-120 ռուբլի արժեցող կաթի փոշիներն ու մանկական սնունդը:

Առաջին դուռը «Գթություն» բարեգործական միությանն է, որին հարուստ երեւակայություն ունեցող լայն հասարակայնությունը հակված է համարելու սեղանիկների գլխավոր մատակարարը: **«Աստվա՛ծ սիրեք,** մոտավորապես ասում է Խաչիկ Ստամբոլցյանը, **վերջին անգամ կաթի փոշի 1991-ի մարտին ենք ստացել՝ Ավստրիայից, ու այլեւս կաթի փոշու երես չենք տեսել»:**

Այս մեկը մեջտեղից դուրս եկավ, ու հիմա էլ թակում ենք առեւտրի նախարարության դժվարամատչելի դուռը, ուր տվյալներ հաղորդելու համար պահանջում են, որ նախ հայցենք առեւտրի փոխնախարարի ողորմած թույլտվությունը: Երեւի խիստ գաղտնի ու միայն ծառայողական օգտագործման համար նախատեսված տեղեկություններ են՝ անարգ թշնամին չպիտի իմանա, թե ինչքա՞ն, ինչպիսի՞ ու ի՞նչ սնունդ են օգտագործում մեր անմեղ մանուկները... Բայց փոխնախարարը շատ ավելի լայնախոհ է, ու նրա ակտիվ միջամտությամբ իմանում ես, որ այս տարի հանրապետությունն ընդհանրապես մանկական սնունդ չի ստացել: Միակ մատակարարը՝ Ուկրաինան, չի կատարել կառավարական համաձայնագիրը: Մերոնք դիմել են Բելառուսին, նրանք չեն ասել «չէ», բայց ամեն տուփի համար պահանջել են 110 ռուբլի (լավ բանը կարո՞ղ ես չասել, միայն անցած տարի նախկին գներով մանկական սննդի ձեռքբերման համար կառավարությունը 18 միլիոն է հատկացրել, բոլոր ծախսերն իր վրա վերցրել ու մինչեւ մեկ տարեկան երեխաներին սնունդը ձրի է բաժանվել):

Սակայն մինչեւ բելառուսական սնունդը գա, մայրերի ու մանուկների աչքերն էլ հո... Համաձայնությունը կայացվել է 54 տոննայի համար, որից 27-ը ապրիլի 5-ին արդեն ուղարկվել է, բայց Ադրբեջանում այն, դիվանագիտական լեզվով ասած, սեփական նախաձեռնությամբ բռնագրավել են...

Առեւտրի նախարարության պարենային բաժնում հայտնեցին նաեւ, որ նախորդ տարվա «մնացորդ» անվանյալ մի ժամանակ դատարկ խանութներում իրենց առատությամբ աչքերի կոշտուկներ առաջացնող այժմ երանելի «Դետոլակտ»-եր, «Մալիշ»-ներ, «Մալյուտկա»-ներ ու «Պիլտի»-ներ էլ են ունեցել, որ հունվարի 1-ից հետո հանձնել են դեղատնային վարչությանը:

Ուրեմն, թակվելիք հաջորդ դուռը որոշվում է ինքնիրեն: «Հայդեղատ[illegible]» արտադրական միավորում մտնելով, ինչ է մնում հռետորական հարց տալ. «Դուք ամո՞թ, խիղճ ունե՞ք»...

Զսպիր քո հռետորական կիրքը, քիչ հետո գլխավոր տնօրեն Կարեն Վարդանյանի խոսքից պարզ կդառնա, որ եթե դեղատներում նույնիսկ հնարավոր են զեղծարարություններ, ապա հաշիվը կարող է միայն մի քանի կիլոների վերաբերել: Իսկ համարակալված հատուկ դեղատոմսերով չհիմնավորված պակասորդի համար կարող են եւ աշխատանքից հեռացնել...

Ուրեմն, հաջորդը պոլիկլինիկանե՞րն են, որոնք եւ դուրս են գրում այդ դեղատոմսերը: Չարկ եղավ հարցուփորձել միայն մանկական պոլիկլինիկաների աշխատակիցներին: Հունվարից նախկին կարգը վերացվել է, ըստ որի կոնսուլտացիաներում 28 շաբաթական հղիությունից սկսած մինչեւ ծննդյան 2 ամիսը կանայք պիտի ամսական 2 կգ կաթի փոշի ստանային: Ու հիմա կաթի փոշի են ստանում միայն մանկական պոլիկլինիկաները: Թե ինչքա՞ն ու ինչպե՞ս, զբաղ գլուխկոտրուկ է, ըստ որի հաշվի է առնվում, թե ծանկասագիրն ինչպե՞ս է տնօրինել. եթե երեխայի բախտը բերել է ու դեկտեմբերին [illegible] վել 4 կգ նաեւ [illegible] օրն [illegible] փոշի կստանա, իսկ ե[illegible] ամենք, մարտին [illegible] ընդամենը 1 կգ...

Պոլիկլի[illegible]կլինիկաներում ոչ թե կաթի [illegible] մանկական սննդի հետ գործ ունեն, այլ երեխայի զարգացման թերթիկ *հանգստացնում է, թե մենք լավ ենք ապահովված եւ տագնապելու կարիք չկա»:* Իսկ իրականում Տավուշը Հայաստանի երեւի թե ամենաթույլ օղակն է:

Պարզ է, որ ինչ էլ լինի, գյուղի հերոս տղաները մի քայլ անգամ հետ չեն նահանջի: Բայց նրանց թիկունք է պետք, հատկապես Ավետիքի, Ռաֆֆիի, Սամվելի, Հովիկի, Վովայի, Վրեժի, Անդրանիկի, Կարենի եւ մյուս հայորդիների պես տղաների, որոնք մինչեւ օրս չեն հեռացել սահմանից ու պատրաստ են մինչեւ մահ պայքարել:

Կա եւս մի այլ գործոն, որն ազդում է յուրաքանչյուր մարտիկի հոգեբանության վրա: Դա մայրաքաղաքի «սեղանային» առեւտուրն է: Սեղանիկներով տարված երեւանյան երիտասարդության մտքով չի էլ անցնում, որ իրենց անհոգությունը սահմանի մոտ կանգնած իրենց հասակակիցներին ուղղակի ուժաթափ է անում...

«Կռվի ժամանակ երբեմն մտածում ես, թե Հայաստանն արդեն գրավել են, մնացել ենք մենք», ասում է Կարենը:

Մինչդեռ, գյուղի միակ զոհը Էդիկ Գալստյանն ու մի քանի վիրավորները բավական էին, որպեսզի մեր տղաները շարքից հանեն Ալիբեյլիում տեղակայված երկու տանկերից մեկը: Այդ մասին խոսք գնաց նաեւ գիշերը, երբ մնացինք պահակակետում հսկող մարտիկների ջոկատի հետ: Տղաները վիճում էին, թե ով է ավելի դիպուկ՝ թուրքը թե հայը: Ճաշի սեղանի մոտ կատակներ էին պատմում, եւ նորից վերադառնում իրենց վիճակին: Անդրանիկը հոգոց հանելով ասաց. *«Արդեն զզվել ենք մեր կյանքից, ոչ հեռանկար կա, ոչ ապագա, անգամ ամուսնանալու ժամանակ չունենք, մեր մասին մտածող չկա, չորս տարվա մեջ հազար հիվանդություն ենք ձեռք բերել»:*

Իսկ քսաներեքամյա Ավետիքը մասնակցել է բոլոր կռիվներին եւ հույսը չի կորցնում. *«Ինչքան պետք լինի կդիմանանք, միայն զենք ու զինամթերք տան»:* (Փակագծում նշենք, որ սխրանքները, որ կատարել են Ավետիքն ու նրա ընկերները, բաց եմ թողնում, անսալով գյուղխորհրդի նախագահի խնդրանքին առայժմ չբացահայտել նրանց գաղտնի գործողությունները):

Առավոտյան մեզ ուղեկցող Հրաչ Վարդանյանը խնդրեց հիշատակել, որ շրջանի «Տավուշ» ֆուտբոլային թիմը, որի անդամները հիմնականում ներքինկարմիրաղբյուրցիներն են, այս տարի չկարողացավ մասնակցել Հայաստանի առաջնությանը եւ հույս ունեն, որ մյուս տարի իրենց կթողնեն մասնակցել:

Այգեպար.
ցավ ու տառապանք

Մարտի 12-ից հետո գյուղ մտած թուրքերը տանկով հասել էին մինչեւ պահածոների գործարան, ավերել ու այրել պահեստները, կրակել գինու գործարանի տակառների վրա, հրի մատնել ծխախոտի գործարանի մանաշենքերը, մոտ 25 մլն ռուբլու վնաս տվել: Գյուղի 240 տներից 100-ը գնդակոծության են ենթարկվել, 20-ը լիովին ավերվել: Այգեպարի երկրապահ ջոկատի շտաբի պետ Գագիկ Աղամյանը, որ մեզ տեղ հասցրեց, ուղեկցեց մինչեւ գործարանների տարածքն ու ասաց. *«1600 թղթակից է եկել ու հետ գնացել, բայց ոչ ոք այստեղ չի մնել: Ո՛չ առաջին, ո՛չ երկրորդ, ո՛չ էլ երրորդ իշխանությունների ներկայացուցիչները չեն գալիս, չեն հետաքրքրվում, գոնե դուք՝ չորրորդ իշխանության անունից մի բան գրեք, թող իմանան ինչ վիճակում ենք մենք»:* Գյուղը նմանվում է դժոխքի: Ո՛չ ջուր կա, ո՛չ էլեկտրականություն, ոչ հեռախոսակապ, ոչ հերթապահ բժիշկ, ոչ բենզին, ոչ սնունդ... Երեք ջոկատ են պաշտպանում գյուղը՝ սահմանապահ ուղեկալը (պետ՝ Դավիթ Գյուրջինյան), երկրապահ ջոկատը (հրամանատար՝ Բենիկ Բաղալյան) եւ Կիրովականի ՀՀՇ «Վանաձոր» ջոկատը (հրամանատար՝ Վարդան Ասլոյան): Վերջինս էլ նշեց, որ եթե մի քանի օր առաջ գյուղը պաշտպանող ջոկատների ու կենտրոնի միջեւ կապ չկար, ապա այժմ ամեն ինչ իր տեղն է ընկնում: Ժողովրդին տեղափոխել են, բայց գյուղի ճակատագիրը դեռ անորոշ է: Մարդիկ եկամուտ են ստացել միմիայն այդ գործարաններից, հողատարածք չեն ունեցել ու հիմա կանգնել են լինել-չլինելու առաջ: Եւ այդ պայմաններում էլ, երբ գյուղը թշնամու ափի մեջ է ու անդադար գնդակոծությունների տակ, երբ տարիներով վաստակած ապրուստը մի օրում ոչնչանում է, մարդիկ իրենց հույսը չեն կորցնում: Նույն վիճակին էր նաեւ հարեւան Մովսես գյուղը: Այստեղ հասնելու համար Բերդից Մովսես գնացող կարճ ճանապարհը փակված էր: 760 տուն ու մոտ 3000 բնակիչ ունեցող գյուղը նմանվում էր ամայի, լքված բնակավայրի: Տեղ-տեղ նստած էին ծեր կանայք ու տղամարդիկ, գյուղի կենտրոնում հավաքված էին երկրապահի տղաները: 17 զոհ է տվել գյուղը, իսկ ներքեւի թաղամասերում արդեն քանի տարի է մոտ 150 տներ դատարկ են, ոչ ոք չի բնակվում: Գյուղի շտաբի պետ Վաչագան Ապրեսյանն ու հրամանատար Լյուդվիգ Ապետյանը ղեկավարում են գյուղի տղամարդկանցից կազմված ջոկատները: Զենքն այնքան քիչ է, որ չեմ էլ ուզում թիվը մեջ բերել: Չորս պահակակետերում օրական 70-80 մարդ է հսկում (ընդհանուր թիվը 500 հոգի): Գյուղի վարելահողերի 80 տոկոսը չի մշակվում: Օրեր են եղել, երբ միայն Մովսեսի վրա 500 արկ է ընկել: Այստեղ էլ լսվեցին նույն բողոքներն ու պահանջները. պետական բանակ, զենք ու զինամթերք: Այլապես, Տավուշը, ուր ոչ մի թուրք չի ապրել, ժամանակի ընթացքում կարող է թուլանալ եւ ընկնել թշնամու ձեռքը: Այսօր շրջանի 16 գյուղերից 11-ը թշնամու բռի մեջ են, իսկ Բերդը՝ շրջկենտրոնը, արդեն ստացել է առաջին հարվածները: Մարդիկ սկսել են տեղափոխվել:



Բերդ

Շրջխորհրդի գործադիր կոմիտեի նախագահ Մաթեւոս Ծատուրյանը, որը երկու ամիս է, ինչ ընտրվել է այդ պաշտոնում, ջանում է համախմբել հատվածների բաժանված շրջանը: Նույն ծանր վիճակը, բենզինի (ընդամենը 500 լիտր ողջ շրջանին) ու սննդամթերքի պակասություն: Պետական պաշտպանություն չկա, այն ձեւավորման մեջ է, եւ ըստ նախագահի միանգամից չի էլ կարող լինել: Մի խոսքով, դաժան ու սարսափելի կյանք է սահմանամերձ գոտում:

Տավուշից տուն վերադարձա երկու զգացումով. մեր սահմաններն իրոք հուսալի ձեռքերում են, բայց անհույս վիճակում: Օգնեք, ով ինչով կարող է, որովհետեւ սահմանում ապրող յուրաքանչյուր հայ գիտակցում է, որ մեր հիմնական հոգսը Արցախն է, դրանով ապրում է ամեն կռվող մարտիկ, նաեւ Այգեպարում, Մովսեսում կամ Բերդում ուրախությամբ նշում Շուշիի գրավումը, բայց եւ այնպես նա մնում է նորից անօգնական, անտեր ու զարմացած հարց տալիս. *«Մի՞թե այս հայրենիքը բոլորինը չէ»:*

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ
7-10 մայիս, Տավուշ-Երեւան

Մեծանուն հայի՝ Ալեք Մանուկյանի անվան փողոց Երեւանում



Չորեքշաբթի, մայիսի 13-ին Երեւանի պետական համալսարանի հրապարակում հավաքված բազմահարյուր երեւանցիներ եւ համալսարանի ուսանողներ մասնակցեցին մի գեղեցիկ արարողության. Երեւանի քաղաքային իշխանությունների նախաձեռնությամբ Մռավյան փողոցը վերանվանվում էր ազգային անզուգական բարերար, Հայկական բարեգործական ընդհանուր միության ցկյանս պատվավոր նախագահ Ալեք Մանուկյանի անունով:

Իր ամբողջ գիտակցական կյանքը հայությանն ու հայոց հայրենիքի ծառայությանը նվիրած մեծանուն հայի մասին խոսեցին Երեւանի քաղաքապետ Համբարձում Գալստյանը, շեշտելով, որ ժամանակին, երբ այս կամ այն կազմակերպությունը չէր կարողանում կողմնորոշվել Խորհրդային Հայաստանի հանդեպ, Ալեք Մանուկյանը, հենց սկզբից ճիշտ ընկալելով ու գործելով, սատարում էր հայրենիքին, որովհետեւ գիտեր, որ այնուամենայնիվ դա այն տարածքն է, որտեղ բնակվում է հայ ժողովուրդը եւ այնտեղ դրված յուրաքանչյուր քար քար է վաղվա պետության համար:

Ալեք Մանուկյանի ազգային ծառայությանն անդրադարձավ Արարատյան թեմի առաջնորդական տեղապահ Գերաշնորհ Գարեգին եպս. Ներսիսյանը, որը օրհնեց փողոցն ու այդ փողոցով քայլող զավակներին, որպեսզի նրանք լցվեն նույնքան հայրենասիրությամբ, ինչպես Ալեք Մանուկյանը: Երախտիքի խոսք ասաց նաեւ համալսարանի ռեկտոր Նորայր Առաքելյանը: Շնորհակալության ելույթ ունեցավ եւ ՀԲԸՄ նախագահ, Ա. Մանուկյանի դուստր, տիկ. Լուիզ Մանուկյան Սիմոնը:

Մտավորականության եւ ուսանողության սիրելի փողոցը հետայսու կոչվում է նույն այդ մտավորականության եւ ուսանողության մեծ հոգատար Ալեք Մանուկյանի անունով: Պատիվ արժանավորին:

Հանդիպում Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ

Մայիսի 9-ին ՀՌԱԿ Հանրապետական վարչության պատվիրակությունը, մասնակցությամբ վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանի, վարչության անդամ, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Մելս Սահակյանի եւ վարչության փոխանդամ Կարապետ Հակոբյանի, հանդիպեց Հայաստանի Հանրապետության փոխնախագահ վարչապետ Գագիկ Հարությունյանի հետ: Մեկուկես ժամ տեւած հանդիպման ընթացքում, որն անցավ փոխըմբռնման մթնոլորտում, ՀՌԱԿ պատվիրակության կողմից արծարծվեցին հանրապետության տնտեսական քաղաքականությանը, ինչպես նաեւ կուսակցության եւ կառավարության հարաբերություններին վերաբերյալ խնդիրներ: Առավելապես կարեւորվեց գյուղատնտեսության հետ կապված, ինչպես նաեւ կառավարության կադրային քաղաքականության վերաբերյալ հարցերը: Մտահոգություն հայտնվեց ԼՂՀ-ի եւ Հայաստանի սահմանամերձ գոտում ստեղծված նոր կացության շուրջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

1992 թ. մայիսի 19-ին սեյսմակայուն շինարարության քոլեջի դասախոս պրն. Էդվարդ Քրանսվիքը կկարդա դասախոսություն «Լենինականի տարածքի ռեզոնանսի նոր մոդելները եւ նրանց կիրառությունը երկրաշարժերի կանխագուշակման գործում» թեմայով: Դասախոսությունը նվիրված է սեյսմիկ շարժումների տարածման եւ մասնավորապես Լենինականի ավերմանը Սպիտակի երկրաշարժի ժամանակ: Դասախոսությունները բաց կլինեն Համալսարանի ուսանողության, նաեւ լայն հասարակության համար:

Պրն. Քրանսվիքը կքննարկի ալյուվիալ հողեր ունեցող շրջանների երկրաբանական կառուցվածքի նոր համակարգչային մոդելները եւ ալյուվիալ հողերի ազդեցությունը սեյսմիկ ալիքների տարածման վրա: Մոդելներից մեկը (ԱՄՆ երկրաբանական կենտրոն, Արթուր Ֆրանկլ), որ օգտագործում է CRAY տիպի գերհամակարգիչ, ուժեղ երկրաշարժերի ժամանակ թույլ է տալիս ունենալ վերոհիշյալ շրջանների գունազարդ պատկերները: Սրանով պրն. Քրանսվիքը կավարտի սեյսմագիտության դասախոսությունները ՀԱՀ-ում:

Դասախոսությունը տեղի կունենա անգլերեն:

Թարգմանությունն ապահովվում է:

Պրն. Քրանսվիքը Հայաստանի Ամերիկյան համալսարանի բարձր հաճախականության թվական սեյսմոլոգիայի հրավիրված դասախոս է եւ աշխատում է ԱՄՆ երկրաբանական կենտրոնում: Նա ամերիկյան սեյսմոլոգիայի խմբի անդամներից մեկն էր, որոնք անմիջապես երկրաշարժից հետո հրավիրվել էին ուսումնասիրելու 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետեւանքները:

ՀԱՀ հասցեն. Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, հեռ. 27-10-85, Մեծ դահլիճ, ժամը 13-ին:

Գրեթե չկա, սեղանիկների վրա՝ ինչքան ասես...

ների ու դեղատների: Նրանց այդ փոշին թղթի վրա է հատկացվում՝ թղթի վրա էլ դուրս են գրում... Նույնն էլ Երեւանի առողջապահության վարչությունը, որը նման թղթային հատկացումներ է ստանում նախարարությունից:

Ենթադրվող մեկ այլ սողանցք՝ մատակարարներ: Չէ, այս դուռն էլ կարծես սխալ ծեծեցինք: Պարզվեց, որ մեր մսուրներն ընդհանրապես կաթի փոշի ու մանկական սնունդ չեն ստանում: Եզնիկ վարդապետի բարեգործական օգնությունը՝ 20 հազար տուփ կաթը, մանկապարտեզների ու երեխաների ճշտված ցուցակներով բաժանվեց: Բայց այս մի օգնությունը գրեթե եզակի է:

Ուրեմն, բոլոր ճանապարհները տանում են դեպի այս հարցում ամենաիրավասու առողջապահության նախարարություն: Սակայն փոխնախարար Վահագն Դեմիրճյանն ընդհանրապես ժխտում է իրենց օղակներով իրականացվող գործարքի հնարավորությունը: Նախ այն հիմնավորմամբ, թե եւրոպական հանրության հատկացրած կաթի փոշին միայն 2-2.5 ամիս բավականացրեց, ու արդեն անցած տարվա նոյեմբերից այդ ճանապարհով ոչինչ չի ստացվել: Երկրորդ պատասխանն էլ այն է, որ սեղանիկների վրա եղածի մի մասն իրենք ընդհանրապես չեն ստացել, մյուս մասը վաղուց են ստացել: «Կարծում եմ, որ այնուամենայնիվ ինքնագնումներով են բերում ու նմանատիպ առաջարկներով գործարարները մեզ էլ են դիմում, ի դեպ, ավելի ցածր գներ առաջարկելով», ասում է Վահագն Դեմիրճյանը: **«Մենք պատասխանում ենք, որ եթե նրանք կազմակերպություն են ներկայացնում ու փաստաթղթային կողմն էլ կարգին է՝ թող դիմեն առեւտրի նախարարությանը, գները համաձայնեցնեն եւ այլն: Մեր խնդիրը չէ: Մեզ կտան՝ մենք էլ կբաշխենք»** (առեւտրի նախարարությունում հայտնեցին, որ չնայած բազմաթիվ են ինքնագնումների միջոցով ձեռք բերված զանազան ապրանքներ առաջարկողները, բայց մանկական սննդի կապակցությամբ ոչ ոք չի դիմել)...

... Ո՞վ հալած յուղի տեղ ընդունեց այս ամենը:

Թող հազար անգամ այս երկար շղթայի յուրաքանչյուր օղակներից ամեն մեկի ներկայացուցիչը պնդի, թե **«Մե՛նք չենք, մե՛նք չենք: Մեզ մոտ բացառվում է»** եւ ուրիշին մատնացույց անի: Մենք մեզ հո լավ ենք ճանաչում: Զանազան մեքենայությունների գծով երեւի նմաններս չկա: Ու դեղատնային հաշվառման համակարգը համակարգ, բայց եւ մանկաբարձը, եւ բժիշկը իրենց ծանոթներին «լավություն» անելու մի միջոց կամ հնար միշտ կգտնեն: Զորօրինակ, Եզնիկ վարդապետի բերած կաթն այնուամենայնիվ 35 ռուբլով վաճառվեց սեղանիկների վրա: Հիմա հարյուրավոր մանկապարտեզներից ո՞ր մեկի վարիչն է կամ ընդհանրապես ո՞ւմ միջոցով է սեղանիկին հայտնվել...

Իսկ ո՞վ ասաց, որ ֆրանսիական Կարմիր խաչը կասկածից դուրս է: Նրա տեղացի աշխատակիցներն էլ հո ֆրանսիական նրբավարությամբ աչքի չե՞ն ընկնում...

• Պարզելու համար, թե ով կարող է ավելի խոշոր մատակարար հանդիսանալ սեղանիկների համար, բավական է նկատի առնել, թե ո՞վ է անմիջականորեն տնօրինում կաթի փոշին ու մանկական սնունդը, որտեղ է առավել մեծ չափերով պահեստավորվում: Ուրեմն, առեւտրի ու առողջապահության նախարարությունները կաթի փոշին ու մանկական սնունդը պահեստավորում են «Կաթ» արտադրական միավորման սառնարանային տնտեսությունում մեկ, դեղատնային վարչության բազան էլ երկու սրանցից այն կողմ արժե՞ փնտրել:

Թող միայն աշխարհին վարդագույն ակնոցներով նայողները, ՆԳՆ-ն ու հարկային տեսչությունը վստահ լինեն, որ այդ կաթի փոշին ու մանկական սնունդն ամբողջությա՛մբ ինքնագնումների միջոցով է բերվում: Ու թե հարցնեք, թե այդքան դռներ բախելուց հետո վերջիվերջո ի՞նչ պարզեցիր, ինչպե՞ս է սեղանիկների վրա հայտնվում երեխաների բերանից կտրած սնունդը՝ պիտի ձեռքերս շվարած տարածեմ:

ԱՆՆԱ ԽՈՒՐՅԵԼՅԱՆ

Մեկնաբանում են ԵԱՀԽ փաստաթուղթը

Ինչպես նշել էինք մեր թերթի նախորդ համարներից մեկում, 1992 թ. փետրվարի 28-ին ԵԱՀԽ-ի ընդունած որոշումը տարակարծիք գնահատականների է արժանանում: Ներկայացնում ենք փաստաթղթի մի քանի մեկնաբանություններ:



ՔՐԻՍՏԻԱՆ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ. արտգործնախարարության եւրոպայի բաժնի պատասխանատու

«Նախ պետք է վերջ տալ ճշմարտությանը չհամապատասխանող լուրեր տարածելուն: Որովհետեւ, չնայած ոմանց ողջունումներին, Հայաստանը երբեք փետրվարի 28-ին նման փաստաթուղթ չի ստորագրել այն պարզ պատճառով, որ ԵԱՀԽ-ում ոչ մի փաստաթուղթ չի ստորագրվում մասնակից երկրների կողմից: Բոլոր տեքստերը ընդունվում են ավագ պաշտոնյաների կոմիտեի կողմից փոխհամաձայնության օրենքի հիման վրա: Մի բան, որն այս փաստաթղթին միջազգային իրավական փաստաթղթի արժեք չի տալիս: Օրինակ, փաստաթղթի ընդունումից հետո Ադրբեջանը վերանայել է իր իսկ ընդունած կետերից մեկը: Նախ, այս փաստաթուղթը ցույց է տալիս, թե ինչպես է միջազգային հանրությունը ընդունում Ղարաբաղի հարցը եւ իր մեջ պարունակում է երկու փաստի շարադրում:

Առաջինը Լեռնային Ղարաբաղի Ադրբեջանի կազմում լինելը, քանի դեռ ԵԱՀԽ անդամ 40 երկրները չեն ընդունել ԼՂՀ անկախությունը: Երկրորդ փաստը ԵԱՀԽ երկրների կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչումն է: Բացի դրանից, փետրվարի 28-ի փաստաթուղթը նախատեսում էր կրակի դադարեցման եւ մարդասիրական օգնության ծրագրեր, որը կայանալիք բանակցություններին ԼՂՀ իշխանություններին ճանաչում էր որպես մասնակից կողմ: Այդ փաստաթուղթը հիմնվում է նաեւ ԵԱՀԽ ընդունած երկու սկզբունքների վրա. 1. սահմանների անձեռնմխելիության եւ 2. ինքնորոշման իրավունքի: Շավարշ Քոչարյանը ճիշտ է ասում, երբ նշում է այդ երկուսի հակադրությունը: Բայց այս դեպքում ամեն մեկը կարող է իր բացատրությունը եւ առավելությունը տալ այս կամ այն սկզբունքին: Մեզ համար ամենակարեւոր սկզբունքը ինքնորոշման իրավունքն է: Կա նաեւ երրորդ կարեւոր սկզբունքը հակամարտությունների խաղաղ կարգավորման սկզբունքը: Որովհետեւ, անգամ տարածքների անձեռնմխելիության դեպքում, հնարավոր չէ, որ այդ տարածքում հակամարտություններ լինեն եւ չլուծվեն:

Եւ դա Ղարաբաղի հարցում Հայաստանի կառավարության դիրքորոշումն է: Մենք ասում ենք, որ խնդիրը կա եւ այն պետք է լուծել խաղաղ բանակցությունների միջոցով, նախեւառաջ հարգելով մարդու եւ ազգային փոքրամասնությունների իրավունքները: •

Այն, ինչ ասվեց փետրվարի 28-ի փաստաթղթի առթիվ, պետք է դիտվի նաեւ Լեռնային Ղարաբաղի Հայաստանի կողմից ճանաչման կոնտեքստում: Մի բան, որ չի նշանակում, թե վերը նշվածը կայուն եւ անփոփոխ որոշում է: Հնարավոր է, որ մոտ ապագայում այդ հարցը նորից բարձրացվի: Եւ որպեսզի դրա վերաբերյալ բանավեճը դադարի, անհրաժեշտ է գոնե ոչ ամբողջությամբ կարդալ Հայաստանի պատվիրակության բացատրական ելույթը, ուր ասվում է, թե Հայաստանը Ադրբեջանի հետ ոչ մի տարածքային վեճ չունի: Հայաստանի Հանրապետությունը գտնում է, որ Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է լուծվի մարդու եւ ժողովուրդների ինքնորոշման իրավունքների համաձայն, որը նշված է նաեւ Հելսինկիի եզրափակիչ ակտի 10 սկզբունքների մեջ: Հայաստանը որպես երրորդ շահագրգիռ կողմ, գտնում է, որ այս խնդրի ցանկացած լուծումը կարող է սկսվել ԼՂՀ ժողովրդավարական ճանապարհով ընտրված իշխանությունների եւ Ադրբեջանի կառավարության միջեւ բանակցություններով: Հայաստանը սատար կկանգնի ցանկացած նախաձեռնության: Հայաստանը կանի հնարավոր ամեն ինչ, որ բանակցությունները հաջողություն ունենան»:

ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ. Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ

«ԵԱՀԽ-ի փետրվարի 28-ի որոշումը սկզբունքային որոշում է Լեռնային Ղարաբաղի հարցի միջազգայնացման ուղղությամբ: Փաստացի կա երկու ուղղություն: Մեկն այն է, որ միջազգայնացվում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, նրա պետականություն ստեղծելու ձգտումը, ԼՂՀ ճանաչման փաստը, որն ըստ էության նշանակում է նաեւ պետական անկախության համար մղվող ազգային-ազատագրական պայքարի ճանաչում:

Երկրորդն այն է, որ միջազգայնացվում է մարդու իրավունքների խնդիրը, արցախահայության, որպես ազգային փոքրամասնության իրավունքի հարցը: Դա նշանակում է, որ միջազգային հանրությունը ինչ-որ երաշխիքներ պետք է տա, որ Լեռնային Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում մշակութային ինքնավարության կարգավիճակով: Ցավոք, այսօր միջազգայնացումը գնում է երկրորդ ուղղությամբ: Դրան զգալիորեն նպաստեց նաեւ մեր ղեկավարության դիրքորոշումը: Որոնք են փաստերը: Հենց փետրվարի 28-ի բանաձեւը, որն ընդունվել է կոնսենսուսի սկզբունքով: Եթե Հայաստանի ներկայացուցիչը վետո դներ, նման տիպի բանաձեւ չէր ընդունվի: Այդ բանաձեւից երեւում է այն միտումը, թե ԼՂՀ-ն պետք է մնա Ադրբեջանի կազմում: Փաստորեն, ժողովրդի ինքնորոշման հարցը արհեստականորեն հակադրվում է ազգային փոքրամասնության խնդրին:

Երկրորդը. կան երկու սկզբունքներ. տարածքային ամբողջականությունը եւ մարդու իրավունքները: Բայց խոսքն այն մասին է, որ նախապատվությունը տրվում է այդ հավասարազոր սկզբունքներից առաջինին, այն դեպքում, երբ ինքը Ադրբեջանի Հանրապետությունը, լինելով ԵԱՀԽ անդամ, խախտում է Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնական սկզբունքը: Փաստացի, Ադրբեջանը ընդունելով ազգերի ինքնորոշման իրավունքը, իրեն դուրս է դնում ԵԱՀԽ շրջանակներից: Իսկ նրա նկատմամբ կիրառվում է սահմանների անձեռնմխելիության սկզբունքը, որը միջազգային իրավունքի տեսակետից անհեթեթություն է: Փետրվարի 28-ի որոշումը պատահականություն չէր: Դա հանրապետության իշխանությունների որոշումն էր, քանի որ մարտի 14-ին նույն ԵԱՀԽ ավագ պաշտոնյաների խորհուրդը ընդունեց ԼՂՀ-ի մասին մի նոր բանաձեւ, ուր նշեց, որ ինքը հարգում է փետրվարի 28-ի որոշումը եւ կձգտի այդ որոշման հիմունքների իրականացմանը:

Մարտի 24-ին տեղի է ունեցել ԵԱՀԽ խորհրդի նիստը, ուր եւս մեկ անգամ հաստատվել են նախորդ բանաձեւերի իսկությունը:

Երեք անգամ էլ մեր իշխանությունների ներկայացուցիչները իրավունք ունեին օգտագործել վետոյի իրավունքը, բայց դա չարեցին: Բացի դրանից, մարտի 21-ին երկկողմ կոմյունիկե է ստորագրվել Իրանում, ուր նորից երկու համայնքների առճակատման գիծն է տարվում: Եւ փաստաթղթի առաջին կետում Լեռնային Ղարաբաղի կողքին փակագծում նշվում է Ադրբեջանի հանրապետություն, որով ընդգծվում է ԼՂ-ի պատկանելիության հարցը:

Ըստ էության, ԼՂՀ բնակչությունը արյան գնով տանում է ազգային-ազատագրական պայքար: Նա այսօր պաշտպանում է նաեւ Հայաստանի Հանրապետության հարաբերական անդորրը, հասնում է որոշակի ռազմական հաջողությունների, որոնք անպայման պետք է ամրապնդվեն համապատասխան դիվանագիտական փաստաթղթերով:

Բայց տեղի է ունենում հակառակը: Փետրվարի 26-ին ազատագրվում է Խոջալուն, իսկ փետրվարի 28-ին մեր ներկայացուցչի կողմից ընդունվում է նման որոշում: Յուրաքանչյուր ռազմական հաղթանակ պետք է ամրապնդվի, այլ ոչ թե դրան հաջորդի դիվանագիտական նահանջը»:



ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎՈՅԱՆ Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ

«Այդ փաստաթղթի իրագործումը մտել է փակուղի: Եւ պատահական չէ, որ Շուշիի հետ կապված դեպքերից հետո, Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Րաֆֆի Հովհաննիսյանի արտասահմանյան գործիչների հետ հեռախոսազրույցներում այն միտքն է արտահայտվել, որ ԵԱՀԽ-ի միջնորդական առաքելության հետ կապված գործընթացները մտել են փակուղի եւ չի վերահսկվում այդ փաստաթղթի իրագործումը:

Հայկական կողմը միշտ էլ ձգտել է, որ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը բոլոր տեսակի փաստաթղթերում գրվի որպես աշխարհագրական միավոր. Լեռնային Ղարաբաղ, ինչը դեռեւս չի հաջողվել մեզ: Պարզ է, որ փաստաթուղթն ընդունվել է Թուրքիայի բացահայտ ճնշման տակ: Ընդհանրապես, փաստաթղթում նշված սկզբունքային բախումները ենթադրում են, որ այդ խնդիրը կարեւորներից մեկն է եւ միշտ վախի մեջ է պահում ԵԱՀԽ-ն, քանզի շղթայական ռեակցիայի հավանականությունը մեծանում է:

Եթե դիվանագիտական շրջանակներում այդ նույն խնդրին տարբեր դիրքերից են նայում, ամեն մի տեսություն ելնում է իր շահերից: Մինչդեռ, մոտեցումը միակը պետք է լինի մարդու իրավունքներն ու ինքնորոշման իրավունքը: Մինսկի խորհրդաժողովում պետք է թագավորի հենց այդ գաղափարը: Ի դեպ, արդեն բավականին շատ պետություններ են այդ գաղափարին կողմնակից դառնում»:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի Արցախյան նիստի շրջանակներում

Հատուկ թղթակցություն

ՄԱԿ-ի կենտրոնատեղիում հավատարմագրված լրագրող եւ ՌԱԿ Բոստոնի անգլերեն պաշտոնաթերթ «Արմինիըն Միրըր Սփեքթեյթըր»-ի աշխատակից Ֆլորանս Ավագյանը հետեւյալ թղթակցությունն է ուղարկել մեր թերթին, Անվտանգության խորհրդի Արցախին նվիրված նիստի առթիվ:

ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐ, *Նյու Յորք*.- Երեքշաբթի մայիսի 12-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հաստատեց իր 15 անդամների եւ նախագահի կողմից մշակված հայտարարությունը Արցախյան հարցի մասին երեք մոտեցումներով:

Պատմության մեջ առաջին անգամ հայությանը վերաբերող հարցի քննարկմանը նվիրված իր նիստում Անվտանգության խորհուրդը որոշեց փաստահավաք պատվիրակություն ուղարկել կոնֆլիկտի շրջան, որպեսզի ուսումնասիրի ԵԱՀԽ-ի խաղաղարար աշխատանքներին օգնելու եւ մարդասիրական օգնություն կազմակերպելու հնարավորությունները: Պատվիրակության պետ նշանակվեց քաղաքական հարցերի գծով գլխավոր քարտուղարի տեղակալ Վլադիմիր Պետրովսկու խորհրդական Ֆրանսիս Վենդրելը:

Շահագրգիռ բոլոր կողմերին զինադադարի կոչ անելով, Անվտանգության խորհուրդն իր հայտարարության մեջ խոր մտահոգություն հայտնեց շրջանում վատթարացող կացության եւ հրադադարի որոշումների հաջորդական բռնաբարման առթիվ, որի հետեւանքով մեծ զոհեր ու ավերածություններ են տեղի ունենում եւ սպառնում շրջանի ժողովուրդների անվտանգությանը:

Խաղաղապահ ուժերի առաքումը մերժվեց

Իրազեկման պատվիրակություն ուղարկելու որոշումը ցույց է տալիս տարածաշրջանում իրավիճակի վատթարացման իրական վիճակը: Այդպիսի որոշում ընդունելու եւ խաղաղապահ ուժեր առաքելու պահանջը մերժելու պատճառներից են նաեւ նման ուժերի առաքման հետ կապված ռիսկն ու հսկայական ծախսերը աշխարհի տարբեր շրջաններում:

Ավելին ՄԱԿ-ի խաղաղապահ ուժեր չեն կարող ուղարկվել այնտեղ, որտեղ հակամարտ կողմերը միաժամանակ չեն պահանջում դրանք: Ադրբեջանցիները հետեւողականորեն մերժում են դրանց տեղակայումը Արցախում, փոխարենը առաջարկելով նրանց տեղ տալ Հայաստան-Ադրբեջան սահմանագլխի երկայնքին: Եւ վերջապես կա նաեւ այն հանգամանքը, որ թե ամերիկացիները եւ թե ռուսները, որոնք նկատելի ազդեցություն ունեն աշխարհում, ճշտապահ դիրքորոշում ունեն Արցախյան կոնֆլիկտի նկատմամբ: Նրանք շատ ավելի պիտի նախընտրեին, որ եւրոպացիները զբաղվեին այդ հարցով:

Մայիսի 12-ի նիստը գումարվեց միաժամանակ երեք անդամ երկրներից Հայաստանից, Ադրբեջանից եւ Թուրքիայից եկած դիմումների վրա, որոնք ներկայացվել էին Անվտանգության խորհրդի ներկայիս նախագահ ՄԱԿ-ում Ավստրիայի դեսպան Պիտեր Հոհենֆելլներին:

Հայաստանի նախագահն իր նամակում էր նշել, որ թեեւ Հայաստանը «կողմ չէ» Արցախի եւ Ադրբեջանի միջեւ վեճում, սակայն ենթարկվում է անօրինական շրջափակումների եւ հարձակումների իր իսկ տարածքի վրա:

«Մենք համոզված ենք, գրում էր Լ. Տեր-Պետրոսյանը, **որ առանց միջազգային երաշխիքների, որոնք միայն ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը կարող են տալ, կոնֆլիկտի սրումը կշարունակվի, ծանր վտանգի ենթարկելով շրջանի եւ նույնիսկ աշխարհի անվտանգությունը»:**

Թուրքիան, իր հերթին, Անվտանգության խորհրդի նախագահից խնդրել էր իրազեկման առաքելություն ուղարկել շրջան եւ կոչ էր արել **«իսկույն հեռացնել հայ զինյալ տարրերին»** Ադրբեջանի տարածքից: Հաստատելով հանդերձ, թե արցախյան կնճիռը անհրաժեշտ է լուծել խաղաղ ճանապարհով, այն զգուշացնում էր, թե **«Թուրքիան թույլ չի տալու ադրբեջանական տարածքի զավթումը ուժի միջոցով»**:

Նիստից հետո պրն. Արզումանյանն ինձ ասաց, որ ինքը **«բավարարված է»** Անվտանգության խորհրդի որոշումով: **«Սա առավելագույնն էր, որ մենք կարող էինք ակնկալել խորհրդից այսօր»**, եզրակացրեց նա:

Պայքար ինքնորոշման համար

Նիստի ընթացքում, որի մեծ մասն անցավ փակ դռների ետեւում, Անվտանգության խորհուրդը լսեց ՄԱԿ-ում Հայաստանի դեսպան Ալեքսանդր Արզումանյանի մանրամասնյալ զեկուցումը Արցախյան տագնապի մասին: Նկարագրելով վատթարացող իրավիճակը շրջանում, ինչպես նաեւ հետզհետե սաստկացող նախահարձակումները նույնինքն ՀՀ սահմանամերձ շրջանների վրա, պրն. Արզումանյանը հաստատեց, որ Ադրբեջանը բացորոշ կերպով ձգտում է կոնֆլիկտի մեջ ներքաշել Հայաստանին:

«Հայաստանը շարունակում է Արցախյան կնճիռը դիտել որպես պայքար Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի համար, որը պետք է լուծվի Արցախի ընտրյալ իշխանության եւ Ադրբեջանի միջեւ ուղղակի բանակցություններով», հայտարարեց Հայաստանի ներկայացուցիչը:

Մանրամասնություններ ներկայացնելով Ստեփանակերտի կատաղի ռմբակոծումների եւ քաղաքում տիրող իրավիճակի, ջրի, էլեկտրականության, սննդի եւ դեղորայքի իսպառ բացակայության մասին, պրն. Արզումանյանը մարդասիրական օգնության առջեւ դրված արգելքները որակեց ոտնահարում ԵԱՀԽ-ի համաձայնության, որին անդամ է նաեւ Ադրբեջանը, եւ պահանջեց բացել մարդասիրական միջանցքները:

Հայ ներկայացուցիչը բացատրեց պատճառները Շուշիի գրավման, որտեղից ազերիները «Գրադ» կայաններից հազարավոր հրթիռներ էին տեղում Ստեփանակերտի վրա: Նույնիսկ այն պահին, երբ Հայաստանի նախագահը մայիսի 7-ին Թեհրան էր մեկնում խաղաղության խորհրդաժողովին մասնակցելու, ազերի ուժերը ռմբակոծեցին Ստեփանակերտի օդանավակայանը, որ միակ կապն է արտաքին աշխարհի հետ:

Արզումանյանը խնդրեց խաղաղապահ ուժեր ուղարկել շրջան եւ վերացնել շրջափակումները եւ պաշտպանել մարդու իրավունքները, միաժամանակ կոչ անելով ՄԱԿ-ին, որ **«կենսական եւ առանցքային»** դեր խաղա որպես միջնորդ եւ մասնակցի առաջիկայում Մինսկում կայանալիք ԵԱՀԽ-ի խորհրդաժողովում: Նա Անվտանգության խորհրդից պահանջեց արգելել շրջանում միակողմանի միջամտությունները ՄԱԿ-ի անդամ որեւէ երկրի կողմից, ինչ որ բացահայտ ակնարկություն էր Թուրքիայի հասցեին:

Ադրբեջանական մամլո ասուլիս ՄԱԿ-ում

Նույն օրը ՄԱԿ-ում հավատարմագրված լրագրողների առաջ ելույթ ունենալով, Ադրբեջանի դեսպան Հասան Հասանովը Արցախյան հիմնահարցի հիմքը համարեց **«Հայաստանի տարածքային պահանջները Ադրբեջանից»**: Մերժելով պատասխանել այն հարցին, թե արդյոք Ադրբեջանը պատրա՞ստ է ընդունել խաղաղապահ ուժերին Արցախում, Հասանովն ասաց, որ դրանց տեղադրումը կարտոնվի միայն հայ-ադրբեջանական սահմանագծի վրա եւ կրկնեց ՄԱԿ-ի փաստահավաք նոր առաքելություն ուղարկելու պահանջը:

Ադրբեջանի ներկայացուցիչը հավանություն տվեց, որ **«Ռուսաստանը կարող է դրական դեր խաղալ Արցախում»**, քանի որ այն **«նրա շահագրգռության գոտում է գտնվում»**, սակայն ավելացրեց, որ Ռուսաստանը պետք չէ **«Հայաստանի նախահարձակմանը»** նպաստի դիվանագիտական, զինվորական կամ քաղաքական միջոցներով: Այդպիսով նա ուզեց ասել, որ Ռուսաստանն ավելի բարյացակամ է Հայաստանի նկատմամբ:

Խոսելով ռուսերեն լեզվով, երբեմն բարձր եւ բարկացկոտ տոնով, նախկին կոմունիստ պաշտոնյան հատուկ ուշադրություն դարձրեց Շուշիի գրավման փաստի վրա, այն համարելով **«ավելի ողբերգական քան Խոջալուն»**, որտեղ ըստ ազերիների (այժմ արդեն լրիվ հերքված) հայերը ջարդեր էին կազմակերպել:

Նա մեղադրեց նաեւ «Հայկական բանակին», որ փորձում է գրավել Լաչինը, որտեղից, ըստ նրա, հայերը ուզում են **«մարդասիրական միջանցք»** բացել:

«Չեմ կարող ապացուցել»

Հայաստանին **«նախահարձակ»** անվանելով, Հասանովը պնդեց, թե հայերը **«շատ հաջողակ են քաղաքականության եւ դիվանագիտության, ինչպես նաեւ զինվորական նախահարձակման մեջ»**: Երբ նրան հարց տրվեց, թե ո՞ր երկրներն են նեցուկ կանգնում Հայաստանին, նա մերժեց պատասխանել, ավելացնելով որ ինքը **«չի կարող ապացուցել դա»**: Իսկ երբ հարց տրվեց, թե արդյոք Թուրքիան օգնում է Ադրբեջանին, նա վրա տվեց. **«Կարո՞ղ եք ապացուցել»**:

Պնդելով, որ Արցախում հայկական ուժերը **«շատ լավ սպառազինություն ունեն եւ ավելի մեծաթիվ են քան ազերիները»**, Հասանովը միջազգային համայնքին մեղադրեց **«հայանպաստ դիրքորոշման մեջ»**: Նա շարունակեց պնդել **«190 հազար ազերի փախստականների»** եւ հայերի կողմից **«200 գյուղերի ոչնչացման»** մասին:

Երբ հարց տրվեց Թեհրանում մայիսի 8-ին կայացած համաձայնությունը Բաքվի կողմից չեղյալ համարվելու փաստի մասին, Հասանովը մեղադրեց հայկական կողմին, պնդելով, թե **«այն չեղյալ էր հայտարարվել այն մարդկանց կողմից, որոնք նեցուկ կանգնեցին Շուշիի գրավմանը»**:

Շարունակ մերժելով պատասխանել խաղաղապահ ուժերը Արցախում տեղադրելու մասին լրագրողների համառ հարցերին, Հասանովը խոսեց այն մասին, թե ադրբեջանական կողմը որքա՞ն **«սիրալիր է եղել միշտ»** արցախահայության նկատմամբ, որոնք ոչ միայն իրենց լեզուն եւ մշակույթը, այլեւ **«քաղաքական ղեկավարներն ունեին»** Արցախում: ■

Ավարտվում է «Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ժողովը

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առաջին նիստը, որը սկսվել էր ապրիլի 14-ին, այսօր ավարտվում է:

«Ազգ»-ի թղթակից Ռաֆֆի Հերմոն Արաքսը երեկ «Հրազդան-2» հյուրատանը, ուր խորհուրդը ժողով էր գումարում, մանրամասնություններ իմացավ կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ժողովին, ուր մամուլի ներկայացուցիչների ներկայությունը նախատեսված չէր, մասնակցում էին Հայաստանի Հանրապետության փոխնախագահ եւ վարչապետ Գագիկ Հարությունյանը, ՀՀ ԳԽ-ի նախագահ Բաբկեն Արարքցյանը, ՀՀ ֆինանսների նախարար Ջանիկ Ջանոյանը, բանկի տնօրեն Իսահակ Իսահակյանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդը, ՀԲԸՄ նախագահ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնը, Ամերիկայի Հայկական համագումարի նախագահ Հրայր Հովնանյանը, ՌԱԿ Կենտրոնական վարչության ատենապետ դոկտ. Արշավիր Գյոնջյանը, ՀՅԴ ներկայացուցիչ Վաչիկ Ղարաբեկյանը, Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության ներկայացուցիչ Տիրան Ակինյանը, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, Ռուսաստանից Ստեփան Սիտարյանը եւ աշխարհահռչակ ֆրանսահայ կինոռեժիսոր Անրի Մալաքյանի (Անրի Վեռնոյի) եւ երգիչ-դերասան Շառլ Ազնավուրի փոխարեն Ֆրանսիայից Ժ. Մարկոսյանը:

Մեր թղթակցի ստացած լուրերի համաձայն, Կալիֆորնիայի նախկին նահանգապետ Ջորջ Դուքմեջյանը, որը հրավիրվել էր այս ժողովին, մինչեւ այսօր չի ուղարկել որեւէ պատասխան իր բացակայության պատճառների վերաբերյալ:

Ալեք Մանուկյանը իր տարիքի, Ազնավուրը իր նախապես պատրաստված ծրագրերի, իսկ Անրի Մալաքյանն էլ հրավերը բավական ուշ ստացած լինելու պատճառով չեն կարողացել ներկա լինել:

Հոգաբարձուների խորհրդի ժողովը ավարտելուց հետո մեր թղթակցին հակիրճ տեղեկություններ տվեցին Հայաստանի Հանրապետության փոխնախագահի եւ վարչապետ Գագիկ Հարությունյանի օգնական Թաթուլ Մարգարյանը եւ հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավար տիկին Մանուշակ Պետրոսյանը. «Այսօր թվում է ժողովի ամենաարդյունավետ օրն էր, քանի որ վաղն արդեն ավարտին ենք հասցնում այս հավաքը. քննարկվեցին հիմնադրամի կանոնադրությունը, որը ներառում էր բոլոր սկզբունքային հարցերը: Քննարկվեցին նաեւ հիմնադրամի նպատակները, միջոցները, ձեւավորումները, հիմնական գործունեությունը, տնօրինելիք ղեկավար եւ գործադիր մարմինների կառուցվածքային հարցերը», ասացին նրանք:

Տիկին Պետրոսյանը հատկապես նշեց, թե «հրավիրված բոլոր կողմերը լավ պատրաստված էին եկել եւ համարյա որեւէ լուրջ տարակարծություն չի եղել»:

Մեր թղթակցի ստացած տեղեկությունների համաձայն, այս ժողովում ամենակարեւոր վեճը եւ տարակարծությունները բխել են հիմնվելիք «Հայաստան» համահայկական հիմնադրամի լուրջ հսկողության ու ստուգման հարցում: Մի բան, որի լրիվ համոզվածության դեպքում է միայն, որ սփյուռքահայությունը կկարողանա մեծապես ու ավելի ձեռնբաց լինել մայր հայրենիքի հանդեպ:

Ռ.Հ.Ա.

Տպավորություններ Ֆրանսիական քաղաքական կյանքից

Ռուբեն Միրզախանյանը վերադարձավ Ֆրանսիայից

Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության նախագահ Ռուբեն Միրզախանյանը ՌԱԿ Արեւմտյան Եւրոպայի շրջանային վարչության հրավերով ապրիլի 15-ից 29-ը գտնվում էր Ֆրանսիայում: Այստեղ նա առիթ ունեցավ Փարիզ, Լիոն, Վալանս եւ Մարսել քաղաքներում տեսակցել եւ կապեր հաստատել ֆրանսիական քաղաքական գործիչների եւ նաեւ ՌԱԿ-ի տարբեր պատասխանատուների հետ: Այս կապակցությամբ մեր թղթակիցը հանդիպեց եւ զրույց ունեցավ նրա հետ:

RPR-ի քարտուղար, Ազգային ժողովի անդամ, Եւրախորհրդարանի պատգամաւոր Միշել Ալիոմարիի հետ

– Պարոն Միրզախանյան, հետաքրքիր է իմանալ, թե Ֆրանսիայի ո՞ր քաղաքական կազմակերպությունների եւ դեմքերի հետ տեսակցեցիք:

– Ասեմ, հիմնականում RPR (Հանրապետության համար հավաք) կուսակցության տեղական գործիչների հետ: Նրանց մեջ հետաքրքիր էր Լիոն քաղաքի քաղաքապետ Միշել Նուարը, որը RPR-ից վերջերս հրաժարվելով հանդերձ, այսօր էլ հեռու չէ այս կուսակցությունից: Ծանոթացանք նաեւ Լիոնի փոխքաղաքապետ, դարձյալ RPR-ի անդամ պարոն Վահե Մուրադյանի հետ (Ֆրանս-Արմենի ամսաթերթի նախկին գլխավոր խմբագիր (մինչեւ իր փոխքաղաքապետ ընտրվելը ՀՅԴ անդամ – խմբ.). Վալանս քաղաքի փոխքաղաքապետ Մանուկ Ստեփանյանի հետ, որը Ալեն Ժուպեից հետո RPR կուսակցության երրորդ դեմքն է: Պետք չէ մոռանալ մանավանդ Ալեն Ժուպեին, ռադիկալ կուսակցությունից Ռուբեն Պասալին:

– Իսկ RPR կուսակցության նախագահ եւ Փարիզի քաղաքապետ Ժակ Շիրակի աջ բազուկներից մեկի՝ Պատրիկ Դեվեջյանի հետ չհանդիպեցի՞ք, որը Ֆրանսիայի ազգային ժողովի միակ հայ պատգամավորն է եւ Փարիզի Անտոնի արվարձանի քաղաքապետը:

– Գիտեք, Ֆրանսիայի իմ հանդիպումների ծրագրերը պատրաստել էր ինձ հրավիրող կողմը եւ նրանք Պատրիկ Դեվեջյանի հետ որեւէ հանդիպում չէին նախատեսել: Նրա հետ պատահաբար ծանոթացա ապրիլի 26-ին Փարիզի սուրբ Աստվածածին տաճարում, ցեղասպանության զոհերի հիշատակի հոգեհանգստին:

– Տպավորություն է ստեղծվում, թե դուք կարծես ծրագրված կերպով հանդիպել եք միայն RPR կուսակցության հետ: Ի՞նչ է այս մենաշնորհի պատճառը: Արդյոք հատուկ համակրանք կա՞ր RPR-ի հանդեպ:

– Դուք ճիշտ նկատեցիք, գաղտնիք էլ չէ, որ ՀՌԱԿ-ը եւ ՌԱԿ-ը հատուկ կարեւորություն են տալիս ֆրանսիական քաղաքական կուսակցությունների մեջ Ժակ Շիրակի նախագահած RPR կուսակցությանը: Ընդհանուր տնտեսական զարգացման հարցերի առումով մեր միջեւ կան որոշակի նմանություններ, թեեւ կան նաեւ լուրջ տարբերություններ:

– Ի՞նչ նմանությունների եւ ի՞նչ տարբերությունների մասին է խոսքը:

– RPR-ի ընդհանուր ուղղվածությունը, այսինքն ընդհանրապես սեփականության տարբեր ձեւերի ընդունումը ամբողջովին համընկնում է մեր կուսակցության նույն հարցի վերաբերյալ ունեցած մոտեցումներին: Սրա հետ միասին նկատում ենք, որ համաշխարհային տնտեսության զարգացման փորձը վկայում է շուկայական հարաբերությունների տնտեսական արդյունավետության մասին: Գալով տարբերություններին, սրանք պայմանավորված են Ֆրանսիայի եւ Հայաստանի տնտեսական զարգացման էական առանձնահատկություններով: Բացի դրանից, կան նաեւ կառուցվածքային առումով նմանություններ եւ տարբերություններ: Նախ երկու կուսակցություններն էլ խորհրդարանական տիպի են: RPR-ի համար բնորոշ է նախ եւ առաջ կուսակցության հաջողությունները ընտրությունների ժամանակ: Մենք նորաստեղծ կուսակցություն ենք, սակայն նույնպես պետք է հետապնդենք ընտրությունների ընթացքում հաջողության հասնելու կարեւոր խնդիրը: Այստեղ պետք է ընդգծել անպայման Հայաստանի առանձնահատկությունները: Սրանք են պայմանավորում ՀՌԱԿ կառուցվածքային այն տարբերությունները, որոնք զանազանում են Հայաստանի եւ արեւմուտքի քաղաքական կուսակցությունները իրարից: Կուսակցությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, կուսակցական կառույցները գործում են տարածքային սկզբունքով: Հայաստանի տարածքային բաժանումը, ըստ երեւույթին, կենթադրի որոշակի փոփոխություններ: Առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ Հայաստանի բնակչության գրեթե կեսն ապրում է մայրաքաղաք Երեւանում: Ուրեմն ՀՌԱԿ ակումբների գործունեությունը մի կողմից պետք է ենթադրի տարածքային սկզբունքը, մյուս կողմից ցանկալի է որոշել սոցիալական կազմը: Չմոռանանք վերջապես, որ եւ RPR-ը, եւ ՀՌԱԿ-ը սոցիալիզմին հակառակ են:

– Սփյուռքում հայերը այս կամ այն տեղական կուսակցության հանդեպ իրենց համակրանքը կամ հակակրանքն ունենում են այս կուսակցությունների՝ հայկական հարցի եւ ընդհանրապես հայերի հետ կապված խնդիրների հանդեպ ցուցաբերած մոտեցումը հաշվի առնելով. եւ RPR-ի հետ լավ հիշողություններ չեն կապված: Ֆրանսահայերը հայանպաստ պետական որոշումներ, օրենքներ պոկեցին սոցիալիստների, նույնիսկ կոմունիստների օրոք, ոչ թե RPR-ի, երբ, ընդհակառակը, տուժեցին այս կուսակցության ընդունած «հակաօտարական» օրենքներից: Այս բոլորից հետո ինչպե՞ս եք բացատրում ՀՌԱԿ-ի եւ RPR-ի միջեւ սերտ կապեր հաստատելու ձգտումը:

– Հասկանում եմ ձեր մտահոգությունները: Սակայն RPR-ի հետ ավելի սերտ կապեր պետք է ստեղծեն թե հայկական համայնքը, թե Հայաստանի քաղաքական շրջանակները: Այդ հարաբերությունները հարկավոր է խորացնել: ՀՌԱԿ-ը պատրաստակամություն է հայտնում իր կապերն ի շահ դնել թե սփյուռքի, թե մայր հայրենիքի ազգային խնդիրների լուծմանը: Մենք տեսնում ենք, որ այստեղ բաց կա եւ ուզում ենք այն փակել՝ իմանալով, որ RPR-ն այսօր մեծ ժողովրդականություն է վայելում, համախոհների լայն շրջանակ ունի ֆրանսիական հասարակայնության մեջ: Չմոռանանք նաեւ այն փաստը, որ սոցիալիստ նախագահ Միտերանը, հակառակ 1986 թ. Վիեննի եկեղեցում արտասանած հայանպաստ ճառին, գործնականում մինչեւ վերջ պաշտպան կանգնեց Գորբաչովին եւ նրա դիրքորոշումներին, այդ թվում Արցախի հարցով:

– RPR-ի պատմության մեջ կար «Սակ» կազմակերպություն, որն այս կուսակցության երիտասարդական ակումբն էր եւ 70-ական թվականներին հանրահայտ էր իր հարձակողական արարքներով: Նրա անդամները հաճախ էին ընկնում ոստիկանատներ հակահասարակական արարքների պատճառով: Այսօրվա RPR-ի ղեկավար մարմնի որոշ անդամներ, նույնիսկ մեր հայրենակից Պատրիկ Դեվեջյանը, որը մինչեւ իր պատգամավոր ընտրվելը, այսինքն մինչեւ 1984 թիվը, ԱՍԱԼԱ-ի մարտիկների փաստաբանն էր, անդամ էին այդ «Սակ» ակումբի: Ակումբը նույնիսկ որակվում էր որպես ֆաշիստական կազմակերպություն: Այս ամենը ձեզ չի՞ մտահոգում:

– Ցանկացած կուսակցության մասին պետք է դատել նրա այսօրվա քաղաքականությամբ եւ ծրագրերով: Կրկնում եմ եւ ուզում եմ ընդգծել, թե իրատեսորեն վերլուծելով եւ գնահատելով նրա հնարավորությունները առաջիկա ընտրություններում, մենք հարմար ենք գտնում սերտ կապեր հաստատել ու համագործակցել այս կուսակցության հետ: Քաղաքականությունը, մանավանդ լուրջ քաղաքականությունը, պետք է բարձր լինի զգացմունքային գնահատականներից: Իհարկե, դրա հետ մեկտեղ սկզբունքային հարցերը, նախեւառաջ նկատի ունեմ ազգային շահերը, մեր կուսակցության կողմից երբեք զիջումների առարկա չեն կարող լինել:

– Ինչպես հասկացա, դուք ուզում եք RPR-ի հետ ձեր հարաբերությունները կառուցել հանդուրժողականության եւ համբերատարության վրա, պատրաստ նրան բացատրելու իրերի իսկական դրությունը: Այսինքն՝ փոխանակ էժան ծափահարողների ետեւից վազելու, նախընտրում եք հակառակորդի հետ հարաբերելով նրանից շահ կորզել: Դա ինձ հիշեցնում է այսօրվա մեր հանրապետության նախագահին, որը մի քանի տարի առաջ, երբ պարզ քաղաքական գործիչ էր եւ Փարիզում էր գտնվում առողջական հարցերով, Սիմոն Վեյլին Հայաստան հրավիրեց: Ինչպես գիտեք, Ֆրանսիայի նշանավոր հրեա քաղաքական գործիչը 1986-ին Ստրասբուրգում Եւրախորհրդարանի բացառիկ նիստում կտրականապես դեմ էր Եւրախորհրդարանի կողմից հայկական ցեղասպանության ճանաչման ու դատապարտման առաջարկին:

– Կարելի է եւ այդպես ասել:

– Պարոն Միրզախանյան, նախքան Փարիզ այցելությունը, առիթ կամ ժամանակ ունեցե՞լ եք պրպտել Ֆրանսիայի քաղաքական կյանքի ընդհանուր երեւույթները եւ ի՞նչ են ձեր ընդհանուր տպավորությունները:

– Իհարկե, մինչեւ Փարիզ մեկնելս որոշ չափով նախապատրաստվել էի այդ հարցին: Այսօր Ֆրանսիայի քաղաքական իրավիճակը կարելի է գնահատել հետեւյալ կերպ. տասը ամիս հետո պետք է տեղի ունենան նոր պատգամավորական ընտրություններ: Այսօրվա կառավարող սոցիալիստական կուսակցության դիրքերում որոշակի նահանջ է դիտվում: Քաղաքական հովհարի մյուս թեւը, այսինքն Վալերի Ժիսկար դ'Էստենի UDF-ը, ինչպես հայտնի է, կազմված է մի քանի կուսակցություններից: Այս միությունն ինչքանո՞վ է ամուր, դժվար է ասել: Գալով RPR-ին, նրան հատուկ է ներքին միասնությունը, պետք է նաեւ հաշվի առնել Ֆրանսիայի ազգային ժողովում այս կուսակցության ունեցած ծանրակշիռ տեղը (570 տեղից 140-ը): Բացի այդ, RPR-ում կան Ֆրանսիայի քաղաքական կյանքի անվանի գործիչներ. Ժակ Շիրակը, Ալեն Ժուպեն, Միշել Նուարը եւ այլք, որոնք որոշակի հասարակական հեղինակություն ունեն: Հետո կան ծայրահեղականները: Անառողջ ազգային տրամադրությունները նույնպես Եւրոպայում շատ մեծ հաջողությունների կարող են հասնել: Ֆրանսիայում «Ազգային ճակատ» կուսակցությունը եւ նրա նախագահ Լը Պենը սրա ամենացայտուն օրինակներից են: Այս փաստը չի կարելի անտեսել: Թռուցիկ ու մակերեսային հայացք նետելով անգամ Ֆրանսիայի կուսակցությունների համայնապատկերին, հասկանալի է ուրեմն, թե ինչո՞ւ ենք ցանկություն հայտնում փոխհարաբերություններ հաստատել RPR-ի հետ հատկապես:

– Կարծում եմ, մոռացանք խոսել Կանաչների մասին: Մանավանդ Ֆրանսիայի դեպքում ներկայումս շատ կարեւոր է նրանց դիրքը, այստեղ ազգայնամոլների աճի առաջն առնելու միակ հույսը Կանաչներն են:

– Կանաչներն ունեն մի առանձնահատկություն, որը նրանց համար ապահովում է գործունեության որոշակի դաշտ, սակայն մյուս կողմից այդ կուսակցությունը կկանգնի դժվարությունների առաջ, երբ տիրի կառավարական լուրջ լծակների: Այսինքն, ունենալով որոշակի ազդեցություն, նա չափից ավելի է քաղաքականացված: 20-րդ դարի կարեւորագույն հարցերից են էկոլոգիական հարցերը, սակայն քաղաքական գերիշխող դիրք ունեցող կուսակցությունների համար էկոլոգիան տվյալ պահին դառնում է երկսայրի:

– Իսկ RPR-ի հետ համագործակցելու կոնկրետ ի՞նչ ծրագրեր կան:

– Պայմանավորվածություն կա հունիսի առաջին կեսին RPR կուսակցության մի պատվիրակություն ընդունել Հայաստանում, որն իրականանալու դեպքում որակական նոր հարաբերություններ կստեղծվեն արդեն երկու կուսակցությունների միջեւ:

– Պրն. Միրզախանյան, կարծեմ սա ձեր առաջին այցը չէ արտասահմանյան երկրներ:

– Ոչ, ամենեւին: Ճիշտ է, Ֆրանսիայում չէի եղել, սակայն զանազան առիթներով անցյալում եղել եմ Գերմանիայում, Ճապոնիայում, Լիբանանում, Սիրիայում, Ֆինլանդիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում եւ Հարավսլավիայում:

– Ի՞նչ տպավորություն թողեց ձեզ վրա Փարիզը, Ֆրանսիան՝ անկախ RPR-ից, անկախ քաղաքական շրջանակներից: Կարճ ասած, ի՞նչ տպավորություններ եք ստացել Ֆրանսիացի ժողովրդից եւ փարիզյան փողոցներից:

– Հայաստանում այնքան ենք կարդացել եւ լսել Ֆրանսիայի եւ Փարիզի մասին, որ կարծես թե անսպասելի ոչ մի բան չէր կարող լինել այնտեղ: Ֆրանսիան, մասնավորապես ամբողջ Փարիզը թանգարան է բաց երկնքի տակ եւ շատ հաճելի է գիտակցել, որ այդ մեծ ազգի մշակույթի մաս է կազմում նաեւ հայկական համայնքը, պահպանել ջանալով իր ազգային ինքնությունը: Այստեղ ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել այս գաղութի մաս կազմող ՌԱԿ շրջանային վարչությանը ի դեմս նրա ատենապետ պրն. Հակոբ Գասարճյանի, ՀԲԸՄ-ին ի դեմս ատենապետ Լեւոն Քեպապճյանի, որոնք հնարավոր դարձրին այս այցելությունը:

Հարցազրույցը վարեց
ՌԱՖՖԻ ՀԵՐՄՈՆ ԱՐԱՔՍԸ

«ՄՈՍԿՎԱՆ ՈՒԶՈՒՄ ԷՐ ԶԱՎԹԵԼ ԼԵՀԱՍՏԱՆԸ»

Գեներալ Յարուզելսկին պատմում է 1980-ական թվականների սկզբներին Լեհաստանի վրա գործադրված ճնշումների մասին

Լեհաստանի վերջին կոմունիստ նախագահ գեներալ Վոյցեխ Յարուզելսկին օրերս Փարիզում (Վարշավայից առաջ) հրատարակեց *«Շղթաներ եւ ապաստան»* վերնագրով իր հուշերի գիրքը, որտեղ մասնավորապես պատմում է, թե ինչպես «Համերաշխություն» արհմիության 1980 թ. ամառային գործադուլներից հետո անձամբ ինքը եւ Լեհաստանի իշխանությունները երկար ժամանակ Մոսկվայի ճնշումներին են ենթարկվել, եւ Վարշավայում ամեն օր սպասում էին խորհրդային զինված ներխուժմանը:

Յարուզելսկին պատմում է, որ ԽՍՀՄ-ը երբեք բացահայտորեն չի սպառնացել ռազմական ներխուժում կատարել, որպեսզի Լեհաստանի իշխանություններին ստիպի վերացնել ընդդիմությանը: Սակայն, Մոսկվայի ղեկավարներն արդեն 1980 թ. սեպտեմբերին ստեղծել էին ճգնաժամային խումբ, որը Լեհաստանում անվանում էին «Լեհական ակումբ»: Դրա անդամներն էին Սուսլովը, Գրոմիկոն, Ուստինովը, Անդրոպովը, Ռուսակովը (եղբայրական երկրների հետ կապերի հավատարմատարը), Չեռնենկոն, որն այն ժամանակ Բրեժնեւի քարտուղարն էր:

Դրանից քիչ անց Լեհաստանի ռազմական հետախուզության սպաներից մեկը Արեւմուտքում կարողացել էր տեղեկություններ ստանալ Լեհաստանի տարածքում Վարշավայի պայմանագրի երկրների ծրագրած ռազմական գործողությունների վերաբերյալ: Շուտով այդ տեղեկությունները հաստատվել էին:

1980 թ. դեկտեմբերի 1-ին Լեհաստանի զինված ուժերի շտաբի պետի առաջին տեղակալ, գեներալ Հուպալովսկին մեկնեց Մոսկվա: Իր օգնականի հետ նա պետք է նախապատրաստեր Վարշավայի պայմանագրի պաշտպանության նախարարների դեկտեմբերի 3-ին կայանալիք կոմիտեի նիստի փաստաթղթերը: Նրանց ընդունեց խորհրդային բանակի (ոչ թե պայմանագրի միացյալ զինված ուժերի) շտաբի պետ, մարշալ Օգարկովը: Առանց քաշվելու եւ նույնիսկ որոշ պարծենկոտությամբ նա լեհ սպաներին ցույց տվեց այն գործողությունների քարտեզները, որոնց համաձայն զորավարժությունների պատրվակով նախատեսված էր Լեհաստանի քաղաքային եւ արդյունաբերական մեծ կենտրոնների մոտակայքում տեղաբաշխել խորհրդային 15, չեխոսլովակյան 2 եւ արեւելագերմանական մեկ դիվիզիա: Երբ լեհ սպաները նշեցին, որ Լեհաստանի բանակը հենց այդ վայրերում պետք է տեղաբաշխվեր տագնապի դեպքում, նրանց պատասխանեցին, որ դա *«կարեւոր չէ»*:

Յարուզելսկին պատմում է, որ երբ ուշ գիշերով Վարշավայում ինքը զննել է այդ քարտեզները, անմիջապես նկատել է, որ իրենք գործ ունեն ողբերգության սցենարի հետ: *«Այլեւս «եղբայրական օգնության» մասին խոսք չկար*, գրում է Յարուզելսկին: *Դա պարզապես Լեհաստանի զավթումն էր օտար բանակների կողմից: Ավելին, ես լավ գիտեի, որ այդ ձեռնարկումը չէր սահմանափակվի հիշյալ 18 դիվիզիաներով եւ հարկ եղած դեպքում առավել զգալի այլ ուժեր կմիջամտեին»:*



Le POINT

Դեկտեմբերի 3-ին մարշալ Կուլիկովը Լեհաստանի համաձայնությունը խնդրեց «Սոյուզ-80» զորավարժությունները դեկտեմբերի 8-ի զրո ժամին սկսելու համար:

Յարուզելսկին եւ Կանյան որոշել էին մերժել, մանավանդ, որ դեկտեմբերի 5-ին Մոսկվայում տեղի էր ունենալու Վարշավայի պայմանագրի անդամ բոլոր երկրների բարձր մակարդակի հանդիպում: Անմիջապես Կանյան հեռախոսեց Բրեժնեւին, որպեսզի նրա հետ առանձին հանդիպում ունենա դրանից առաջ: Սակայն խնդրանքը մերժվեց: Խորհրդային ղեկավարների հետ կապվելու մյուս բոլոր փորձերը նույնպես ձախողվեցին: Կանյան եւ Յարուզելսկին որոշել էին թույլ չտալ այն սխալները, որոնք գործել էին Դուբչեկը եւ իր բարեկամները 1968 թ.: Լեհաստանի ղեկավարները վճռեցին ընդունել որոշ թշնամական ուժերի վտանգի առկայությունը, միաժամանակ պնդելով, որ իրենք լիովին իրավիճակի տերն են եւ կարող են սեփական միջոցներով պաշտպանել սոցիալիստական Լեհաստանի շահերը:

1981 թ. ապրիլի 3-ին Կանյան Յարուզելսկուն տեղեկացրեց, որ իրենք պետք է նույն օրը հանդիպեն Բրեժնեւի բանագնացներին: Դա միանգամայն գաղտնի հանդիպում էր լինելու, որի ժամը եւ վայրը իրենց հայտնելու էին վերջին պահին: Դրանից մի քանի օր առաջ Լեոնիդ Բրեժնեւը հեռախոսել էր Կանյային, պահանջելով վճռական գործողությունների դիմել «Համերաշխություն» արհմիության դեմ, խորհուրդ տալով «բացահայտել» ընդհատակյա երկու զինապահեստ, որոնք կվերագրվեին «Համերաշխությանը»: Ահա թե ինչպես է նկարագրում Յարուզելսկին ապրիլի 3-ի այդ բախտորոշ հանդիպումը:

Առանց տարբերանշանի Ту-154 ինքնաթիռի շարժասանդուղքի մոտ Յարուզելսկուն եւ Կանյային դիմավորում է Վարշավայի պայմանագրի Միացյալ զինված ուժերի շտաբի պետ, գեներալ Գրիբկովը: Գրեթե մեկժամյա թռիչքից հետո ինքնաթիռը վայրէջք է կատարում սահմանամերձ Բրեստ քաղաքի մոտակայքում:

«Երբ ինքնաթիռը վայրէջք կատարեց, գրում է Յարուզելսկին, *նկատեցինք, որ մենք հեռու ենք օդանավակայանի շենքերից, որոնց լույսերը հազիվ էին նշմարվում: Ներքեւում մեզ սպասում էին առանց համարանիշի երեք «Վոլգա» ավտոմեքենա: Դրանց մեջ քաղաքացիական հագուստով մարդիկ էին, բայց միանգամայն պարզ էր, որ դրանք ՊԱԿ-ի աշխատակիցներ են... Եղավ մի պահ, երբ մեր մեքենաները նեղլիկ ճանապարհով մտցվեցին կարմիր աղյուսից կառուցված մի հսկա շինության, որը կիսով չափ ամրոց էր, կիսով չափ բանտ: Խոստովանում եմ, այդ ժամանակ ես մտածեցի, որ դա կարող էր լինել իմ վերջին ճանապարհորդությունը... Ամրոցի մուտքով անցնելով, մեր մեքենան դուրս եկավ մի ամայի տարածություն, որտեղ երկաթգծերի վրա կանգնած էր խորհրդային երեք վագոն: Առաջին վագոնից երկու մարդ իջավ մեզ դիմավորելու. դրանք էին ՊԱԿ-ի նախագահ Յուրի Անդրոպովը եւ պաշտպանության նախարար մարշալ Դմիտրի Ուստինովը...*

Նրանք սկզբում մեզ հանձնեցին Բրեժնեւի «Ողջերթը», ապա անցան մեղադրանքներին: Պնդում էին, որ մեր խոստումներին, մեր պարտավորություններին հակառակ, «մենք գրեթե ոչինչ չենք անում հակահեղափոխությունը կասեցնելու համար»: Ուստինովն անդադար կրկնում էր իր սիրելի «նաստուպատելնո ի ռեշիտելնո» բառերը: Նա պահանջում էր հարձակման անցնել, դիմել վճռական գործողությունների: Մի խոսքով, կանգնեցնել սոցիալիզմի թշնամիներին, վերականգնել կարգապահությունն ու կարգուկանոնը: Անդրոպովն ավելի զուսպ էր եւ հավասարակշիռ, բայց դարձյալ վճռականորեն էր տրամադրված: Կանյայի հետ մենք կրկնեցինք ի սկզբանե մեր բերած փաստարկները: Այո, իրադրությունը լուրջ էր, բայց մենք վերահսկում էինք այն: Այո, սոցիալիզմի թշնամիները մեր դեմ արշավ էին սկսել, բայց «Համերաշխություն»-ը ընդունել էր կուսակցության ղեկավար դերը: Այո, եկեղեցին մեծ ազդեցություն ուներ, բայց չափավորելու իմաստով: Նա բնավ կասկածի տակ չէր առնում սոցիալիստական իշխանությունը: Մենք մեր խոսակիցներին խնդրեցինք մեզ ժամանակ տալ, որպեսզի ինքներս կարգավորենք մեր հարցերը սեփական միջոցներով...

Հանդիպումը տեւեց մոտավորապես 6 ժամ: Մենք ուժասպառ էինք եղել, բայց չզիջեցինք, ճնշմանը տեղի չտվեցինք: Եւ համոզված էինք, որ մի նոր տարկետում ենք ստացել: Առավոտյան ժամը 3-ին մենք հրաժեշտ տվինք մեզ «հյուրընկալողներին» եւ վերադարձանք Վարշավա:

Օդանավակայանում մեզ ոչ ոք չէր սպասում»:

Ըստ «Le Point» հանդեսի, 24.04.1992

Կաբելային հեռուստահաղորդում Ֆրանսիայից

Ֆրանսիայի կառավարության կաբելային հեռուստատեսության փորձագետ Միշել Տեր-Անդրեասյանը Սոչիում տեղի ունեցած մամուլի ասուլիսում հայտարարեց, որ շուտով Ռուսաստանի կաբելային հեռուստատեսության բոլոր ստուդիաները, ռադիոյի եւ հեռուստատեսության միջազգային միության անդամները ի վիճակի կլինեն անվճար ընդունել եւ ցուցադրել Ֆրանսիայի լավագույն հեռուստաընկերությունների ծրագրերը: «ԻՖ»-ի թղթակցի հետ զրույցի ժամանակ Ֆրանսիայի ներկայացուցիչը հաղորդեց, որ իրեն է հանձնարարվել Փարիզում հատուկ բյուրոյի նախագծի ստեղծումը, որը կարող է կապող օղակ հանդիսանալ կաբելային հեռուստատեսությամբ զբաղվող Ռուսաստանի եւ Արեւմտյան Եվրոպայի կազմակերպությունների միջեւ: Տեր-Անդրեասյանի խոսքերով, այդ ծրագրերի սահմանում առաջին քայլը Ֆրանսիայի լրատվական հաղորդումների ցուցադրման իրավունքն է, որը տրամադրվել է կաբելային ստուդիաներին: ■

Զինադադարի համաձայնություն

Մայիսի 13-ին Ցխինվալում տեղի ունեցավ Վրաստանի եւ Հարավային Օսիայի ղեկավարներ Էդուարդ Շեւարդնաձեի եւ Տորեզ Կուլումբեկովի հանդիպումը: Բանակցությունների ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն կրակը դադարեցնելու վերաբերյալ: Ինչպես մայիսի 14-ին հաղորդեց Վրաստանի ՆԳՆ մամուլի կենտրոնի ղեկավարը, զինադադարի պայմանները իրագործվում են, մայիսի լույս 14-ի գիշերը կոնֆլիկտի գոտում խաղաղ է եղել: Ինչպես հայտնի դարձավ «ԻՖ»-ին իրազեկ աղբյուրներից, բանակցությունների նախաձեռնողներն էին Էդուարդ Շեւարդնաձեն եւ ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի նախկին անդամ, «Հանուն Ասիայի եւ Խաղաղ օվկիանոսի շրջանում երկխոսության» միության համանախագահ Ալեքսանդր Ձասոխովը: ■

Ճնշում Ղրիմի վրա

Մայիսի 13-ին Ուկրաինայի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց, որի համաձայն Ղրիմի խորհրդարանի կողմից ընդունված հանրապետության պետական ինքնիշխանության մասին արձանագրությունը եւ հանրաքվե անցկացնելու վերաբերյալ որոշումը հակասում են Ուկրաինայի սահմանադրությանը: Փաստաթղթում նշվում է նաեւ, որ Ղրիմի խորհրդարանը նույնպես մինչեւ մայիսի 20-ը պետք է չեղյալ համարի իր որոշումները: Ուկրաինայի խորհրդարանը հանրապետության նախագահ Լեոնիդ Կրավչուկին հանձնարարեց անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկել Ղրիմում սահմանադրական կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ: Քննարկման ընթացքում առաջարկություններ հնչեցին Ղրիմի խորհրդարանը ցրելու եւ այդ տարածքում նախագահական կառավարում մտցնելու վերաբերյալ: Նստաշրջանում ելույթ ունեցած Լ. Կրավչուկը քննադատեց Ղրիմի ղեկավարությանը եւ խորհրդարանի քաղաքականությունը: Նա նշեց, որ «Ուկրաինան թույլ չի տա որեւէ հավակնություն իր տարածքային ամբողջականության դեմ»: ■

Աֆղան-տաջիկական համաձայնություն

Մոջահեդները պետք է աջակցեն վերջերս աֆղան-տաջիկական սահմանն անցած մի խումբ տաջիկների վերադարձին: Այդ մասին հայտարարեց Միջինասիական սահմանապահ օկրուգի Տաջիկստանում տեղակայված օպերատիվ խմբի պետ, գեներալ-մայոր Անատոլի Մարտովիցկին: Մոջահեդներին հղած փաստաթղթում նշվում է, որ 1958 թ. Աֆղանստանի եւ Տաջիկստանի միջեւ կնքված պայմանագիրը կողմերին պարտավորեցնում է փոխանակել սահմանը խախտողներին: Իրենց հերթին, սահմանապահները երաշխավորում են, որ խախտողների նկատմամբ ազդեցության ոչ մի միջոց չի ձեռնարկվի, քանի որ դա այլ ատյանների գործն է: Եթե խախտողները փորձեն Տաջիկստան վերադառնալ զենքով եւ զինամթերքով, նշվում է հայտարարության մեջ, այդ դեպքում «սահմանապահները կձեռնարկեն բոլոր միջոցները սահմանի անցումը կանխելու համար»: ■

Արաֆաթը՝ խաղաղության եւ օդանավի վթարի մասին

Առավոտյան ժամը 3-ն է, իսկ Յասեր Արաֆաթը շարունակում է աշխատել Թունիսի արվարձաններից մեկում գտնվող իր գրասենյակում: Դեռեւս թարմ են երեք շաբաթ առաջ օդանավի վթարի հետեւանքով նրա ստացած վերքերը: «Վերջին տարիներին բախտս անընդհատ բերում է, ասում է նա: Պատմում են, թե Իսրայելի շինարարության նախարար Արիել Շարոնն ասել է, թե 13 անգամ ինձ սպանելու փորձ է կատարել»:

Մերձավոր Արեւելքի խաղաղությանը նվիրված բանակցությունները շարունակվում էին առանց նրա ուղղակի մասնակցության: Կիրթ շարժուձեւերով եւ մամուլի հետ լավագույնս վարվել իմացող, բանակցություններին մասնակցող պաղեստինյան պատվիրակության հետ համեմատած Արաֆաթն այլ պատկեր է ներկայացնում. «Նա 60-ական թվականների ազատամարտիկ է, հին սերնդի «շասախու», ասում է Թունիսում ապրող մի դիվանագետ:

Վթարն արաբական աշխարհին ցնցեց եւ անմիջապես վերածվեց մոլեգին ցնծության, երբ ՊԱԿ-ի նախագահը ողջ եւ առողջ ելավ օդանավի բեկորներից:

Արաֆաթը խստորեն մերժում է բոլոր այն տեղեկությունները, ըստ որոնց Մերձավոր Արեւելքի խաղաղության բանակցություններում պաղեստինյան պատվիրակությունը, որը պաշտոնապես չի ներկայացնում ՊԱԿ-ին, իր ազդեցության տակ չի գտնվում: «Եթե այդպես է, ապա ինչո՞ւ նրանք իմ համաձայնությունն առան բանակցությունների հենց սկզբում: Պատվիրակության յուրաքանչյուր անդամ ինձ է ներկայացվում: Ամերիկացիները գիտեն դա եւ անուղղակիորեն ինձ հետ են բանակցում, նույնիսկ իսրայելցիները գիտեն, որ ինձ հետ են բանակցում», պատասխանում է Արաֆաթը:

NEWSWEEK

Հող խաղաղության փոխարեն. Արաֆաթը ճկունություն չի սպասում Իսրայելի վարչապետ Իցհակ Շամիրից: Շամիրը համառորեն մերժում է ընդունել, թե ինչի շուրջ են բանակցությունները, այսինքն Բուշի առաջարկած «հող խաղաղության փոխարեն» բանաձեւը: Արդյոք դա նշանակո՞ւմ է, թե Արաֆաթը ցանկանում է, որ Իսրայելում հունիսի 23-ին կայանալիք ընտրություններում հաղթի ընդդիմադիր Աշխատանքի կուսակցությունը: «Ինձ համար ոչ մի տարբերություն չկա: Խորքում ես նախընտրում եմ Շամիրին, որովհետեւ նա Իսրայելի անհաշտության ճշմարիտ արտացոլումն է», ասում է նա:

Արաֆաթը հաստատում է, թե Մերձավոր Արեւելքում ուժերի հավասարակշռությունն իր օգտին է թեքվել եւ շրջանում կայունություն չի լինի մինչեւ ինքը չստանա իր ուզածը: «Եթե խաղաղություն է լինելու, ապա ոչ նրա շնորհիվ, որ Իսրայելը որոշել է հող տալ, եւ Մ. Նահանգներն ու Արեւմուտքը ճնշում են գործադրում Իսրայելի վրա զիջումների գնալու: Հիմա գոյություն չունի Խ. Միությունը, որ անկայունություն էր ստեղծում շրջանում, իսկ Արեւմուտքն ու Մ. Նահանգները կարիք ունեն կայունության մի շրջանում, որտեղ աշխարհի ուժանյութն է կուտակված: Իսրայելը Մ. Նահանգների համար միակ ռազմավարական կարեւորության երկիրն էր, բայց ոչ հիմա: Իսրայելը Մ. Նահանգների համար թերեւս ներկայացնում է որոշ արժեք, բայց մենք հասել ենք պատմական մի կետի, որտեղ այսօրվա Իսրայելի եւ Մ. Նահանգների շահերը չեն համընկնում»:

Արաֆաթը սա ասում էր տարիներ ի վեր: Այս անգամ, վերջապես, որոշ ճշմարտություն կարող է լինել սրա մեջ: Բայց արդյոք ՊԱԿ-ի ղեկավարությունը պատրա՞ստ է խաղաղության: Ղեկավարությունում հին ժամանակների ներկայացուցիչներ են, որոնք մերժում են խաղաղության գործընթացը, որն, ի դեպ, ջերմեռանդորեն պաշտպանվում է Արաֆաթի կողմից:

Ստատուս քվո. Արաֆաթը պնդում է, թե ՊԱԿ-ի լուծարման դեպքում ոչ մի խնդիր չի լինի: «Եթե ես հեռանամ, ՖԱԹԻ-ի (ՊԱԿ-ի ամենաուժեղ կազմակերպություններից) ընդհանուր քարտուղարությունը կա», ասում է նա եւ ավելացնում. «Պաղեստինյան Ազգային Խորհրդի կենտրոնական խորհուրդը կա, բավական մարդիկ կան, որոնք կարող են ղեկավարությունը վերցնել»:

Արաֆաթի քննադատներն ասում են, թե նա դեռեւս չի կարողացել ցույց տալ, որ ՊԱԿ-ն ընդառաջում է իր ցանկություններին: «Հիմա ժամանակն է, որ իսկապես ցույց տա, որ իսկական ղեկավար է եւ ոչ թե վերապրող», ասում է Լոնդոնում Մերձավոր Արեւելքի հարցերով մի մասնագետ: Արաֆաթն իր ղեկավարի հատկանիշները ցուցաբերել է անցյալում: Նա ճանաչեց Իսրայելը եւ իր օրհնությունը տվեց խաղաղության բանակցություններին, հակառակ նրան, որ իր այդ երկու որոշումները զայրացրին իր դաշնակից թե պաղեստինցի, թե ոչ պաղեստինցի համակիրներին: Արաֆաթը դեռեւս բավարար քաղաքական ուժ ունի պաղեստինյան պատվիրակությանը ստիպելու հեռանալ բանակցություններից, կամ շարունակելու ճնշումը: Այս իմաստով, երբ իսրայելցիները բանակցում են Արեւմտյան ափի ներկայացուցիչների հետ, նրանք, փաստորեն, բանակցում են Յասեր Արաֆաթի հետ:

Newsweek, 4 մայիսի 1992

Կինոհսկաներ եւ կինոշուկա



Մայիսի 7-ից իր աշխատանքն է սկսել Կաննի ավանդական կինոփառատոնը, որն, ինչպես հայտնի է, ամենահեղինակավոր մրցույթներից է կինոաշխարհում: Այս առիթով ֆրանսիական «L'Express» հանդեսը (23.04.92) անդրադառնում է կինոարդյունաբերության բնագավառում տիրող իրավիճակին:

Աշխարհում ամենաշատ ֆիլմեր արտադրողը քսան տարի շարունակ համարվում է Հնդկաստանը, որը միայն 1990 թվականին թողարկած իր 948 կինոժապավեններով վստահորեն գլխավորում է յոթերորդ արվեստի հոսքագծային արտադրության «հրաշալի տասնյակը»: Բայց ֆիլմերի ռեկորդային քանակը բնավ էլ չի նշանակում ռեկորդային շահույթ: Օրինակ, ԱՄՆ-ը 1990-ին արտադրել է 358 ժապավեն, իր էկրաններին ցուցադրել՝ 422-ը, կինոդահլիճներից ստացել 28 միլիարդ 112 միլիոն ֆրանկի եկամուտ, իսկ Հնդկաստանը նույն 1990 թվականին ցուցադրել է 700 ֆիլմ եւ ստացել 1 միլիարդ 260 միլիոն ֆրանկի եկամուտ:

Տասնյակի մյուս երկրներում պատկերը համապատասխանաբար այսպիսին է. Եւրոպական առաջնությունը պահող Ֆրանսիան նույն թվականին արտադրել է 146 ֆիլմ, ցուցադրել՝ 370-ը, ստացել 3 միլիարդ 829 միլիոն ֆրանկի եկամուտ: Իսպանիան համապատասխանաբար՝ 36, 226 եւ 1 միլիարդ 441 միլիոն ֆրանկ: Իտալիան՝ 119, 482 եւ 2 միլիարդ 720 միլիոն ֆրանկ, Գերմանիան՝ 48, 304 եւ 2 միլիարդ 774 միլիոն ֆրանկ, Մեծ Բրիտանիան՝ 55, 282 եւ 2 միլիարդ 224 միլիոն ֆրանկ, Ճապոնիան՝ 239, 704 եւ 7 միլիարդ 220 միլիոն ֆրանկ, Ավստրալիան՝ 37, 254 եւ 1 միլիարդ 131 միլիոն ֆրանկ, Չինաստանը՝ 128, 200 եւ 2 միլիարդ 455 միլիոն ֆրանկ:

Կինոյի աշխարհը հայտնի է իր ռեկորդներով: Ահա դրանցից մի քանիսը. Ռայներ Ֆասբինդերի «Բեռլին, Ալեքսանդերպլաց» ֆիլմը (1983 թ.) ամենաերկարն է եւ տեւում է 15 ժամ 21 րոպե: Վիկտոր Ֆլեմինգի հանրահայտ «Քամուց քշվածները» (1939 թ.) դիտել են 120 միլիոն հանդիսատեսներ՝ աշխարհի տարբեր երկրներում: Մարլոն Բրանդոյի հոնորարը «Սուպերմեն» ֆիլմի համար (1978 թ.) կազմել է 24 միլիոն ֆրանկ:

Շարունակվում է ամերիկյան ֆիլմերի հաղթարշավը աշխարհի էկրաններին: Ստորեւ բերվող տվյալները վկայում են, որ մասնավորապես եւրոպական երկրներին համակած տագնապը լուրջ հիմքեր ունի: Օրինակ, Գերմանիայում ազգային կինոարդյունաբերությունից ստացված եկամուտը 1990 թ. կազմել է միայն 9.7 տոկոս, ամերիկյան ֆիլմերի ցուցադրումից ստացված 83,8 տոկոսի դիմաց: Ֆրանսիայում համապատասխանաբար՝ 30.1 եւ 58.7, Իսպանիայում՝ 10,4 եւ 72.5, Իտալիայում՝ 20,5 եւ 66,4, Մեծ Բրիտանիայում՝ 15 եւ 80, Բելգիայում՝ 2 եւ 65,6: Հին աշխարհի մշակույթի, այս դեպքում կինոմշակույթի հաստատուն նահանջը ամերիկյան մտածելակերպն ու ապրելակերպը տարածող ամենակուլ կինոմեքենայի առջեւ ուշ թե շուտ լուրջ խնդիրներ է հրամցնելու նաեւ մեզ: Վկան՝ հազարավոր տեսահոլովակները, որ տրոյական ձիու տեսքով անցնում են մեր շեմից ներս:

Ըստ հանդեսի բերած տվյալների, նույն Միացյալ Նահանգները առաջին տեղն են գրավում կինոհաճախումների թվով՝ տարեկան միջին հաշվով ավելի քան մեկ միլիարդ հանդիսատես: Երկրորդ տեղում են ճապոնացիները՝ մոտ մեկ միլիարդ: Ֆրանսիայում 1987 թվականից նկատվում է հաճախումների շոշափելի նվազում. 700 հազար հանդիսատես:

ԳԱՐԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Չմոռանանք, որ կինոն ոչ միայն դրամ է, այլ առաջին հերթին արվեստ, որն ունի իր պատվավոր մրցանակները:

«Ոսկե արմավենի»

Մայիսի 18-ին ավարտվող Կաննի կինոփառատոնի հաղթողը կստանա «Ոսկե արմավենի» մրցանակը, որն անցյալ տարի շահել էր Ջոել եւ Էթան Կոենների «Բարտոն Ֆինկ» ժապավենը (ԱՄՆ): Ի դեպ, Կաննի փառատոնը հիմնվել է 1946 թ. մայիսին:

«Ոսկե արջ»

Կինոփառատոնի ծննդյան տարեթիվն է 1951 թվականը: Այդ բեռլինյան փառատոնի 1992 թ. հաղթողն է Լոուրենս Կասդանի «Մեծ Կանիոն» ֆիլմը (ԱՄՆ):

«Ոսկե առյուծ»

1932-ին հիմնադրված Վենետիկի կինոփառատոնի գլխավոր մրցանակը 1991 թ. տրվեց Նիկիտա Միխալկովի «Ուրգա» ֆիլմին:

«Կեսար»



1976 թ. Ժորժ Կրավենի հիմնած մրցանակը այս տարի «Աշխարհի բոլոր առավոտները» ժապավենով շահեց Ալեն Կարնոն (Ֆրանսիա):

«Օսկար»

Կինոաշխարհի ամենահին եւ ամենապատվավոր մրցանակն է, հիմնված ԱՄՆ-ում 1927 թ., որը 1992 թ. շնորհվեց Ջոնաթան Դեմի «Գառնուկների լռությունը» ֆիլմին:

Ականավոր ֆանտաստի մահը

Վերջերս Նյու Յորքում սրտի եւ երիկամի տագնապից, 72 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց աշխարհի ամենաբեղմնավոր գրողներից մեկը՝ Այզեկ Ազիմովը, որը հայտնի էր հատկապես որպես գիտաֆանտաստիկ գրքերի հեղինակ:

Ազիմովը ծնվել է Բելառուսում, Պետրովիչի ավանում: 1923-ին ծնողները տեղափոխվել են ԱՄՆ, որտեղ եւ ապագա գրողը ավարտել է Կոլումբիայի համալսարանը: Չնայած կրթությամբ քիմիկոս էր եւ այդ ասպարեզում կատարած իր մի շարք հետազոտությունների համար նա ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան, իսկ հետագայում նաեւ Թոմաս Էդիսոնի անվան ու Ամերիկյան սրտաբանների ընկերության մրցանակները համապատասխանաբար «Տիեզերքի կառուցատարում» եւ արյան քիմիական բաղադրությունը ուսումնասիրող «Կենդանի գետը» աշխատությունների համար, նա, այնուամենայնիվ, փոքր տարիքից մեծ հակում է ցուցաբերել դեպի գիտաֆանտաստիկ գրքերն ու ամսագրերը, որոնք իր հոր հրուշակեղենի խանութում հայտնաբերելով՝ ագահորեն կարդացել է: Այդ բնագավառում նա աշխարհի ամենահայտնի դեմքերից մեկն էր դարձել: Նա մոտավորապես 500 անուն գրքի հեղինակ է, որոնց թվում՝ բացի վեպերից, կարելի է նշել նաեւ մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, ֆիզիոլոգիայի, գրականության, կրոնի մասին հանրամատչելի գրքեր, ինչպես նաեւ մանկական ձեռնարկներ: Մի հարցազրույցի ժամանակ նա նշել է, որ իր «միակ հետաքրքրությունը գրելն է»:

Աշխատել է շաբաթական 7 օր, մեքենագրելով րոպեում մինչեւ 90 բառ: Նրա հեղինակած գործերից են «Բախտավոր աստղերն ու աստերոիդների ծովահենները», «Արեւի քաղաքակրթությունը», «Չափի աշխարհում», «Ես ռոբոտ եմ», «Հիմունք եւ կայսրություն» գրքերը: Նրա համբավի տարածմանը մեծապես նպաստել են անսահման երեւակայությունն ու ֆանտաստիկ թեմաները դետեկտիվ ժանրով մատուցելու անգերազանցելի ընդունակությունները: Հ. Ծ.

Գեւորգ Էմին. «Երկիրը երկիր չի...»

◆ – Սա ի՞նչ վիճակ է. հաց չկա, ջուր չկա, գազ չկա, լույս չկա: Ո՛ր կողմը նայում ես՝ խավար է, ցուրտ, մութ...

– Ոնց էսպես գնա, շուտով երեւի մութ էլ չլինի...

◆ Սառցակալած մայթի վրա ծերունին ընկավ ու ոտքը ջարդեց:

– Ինչո՞ւ չեք մաքրում գոնե մայթերի ձյունը...

– Դու էստեղերից չե՞ս, լուսնի՞ց ես ընկել, ինչ է, չգիտե՞ս, որ շրջափակում է, ոչ գնացք է գալիս, ոչ էլ...

– Լավ, իսկ թերթե՞րը, այս էլ տասը օր է, ինչ ոչ մի թերթ ու ամսագիր չենք ստանում...

– Արա՛, բա դու իսկի խիղճ չունե՞ս... Արցախում տներ են քանդվում, մարդիկ են սպանվում, իսկ դու էստեղ քո թերթերի դարդն ես անում...

Իսկույն հիշեցի ժամանակին Աշտարակում տարածված խոսքը՝ «երկի՛րը երկիր չի, ախպե՛ր, երեկ էլ հորեղբորս տղեն գրիպով հիվանդացավ»:

◆ Կանչում են ամենամեծ կաշառքագետ դատավոր-դատախազին:

– Պիտի էս երկրից կաշառքը վերացնես եւ բոլոր կաշառակերներին պատժես:

– Դժվար գործ ա... Ըմմ, ի՞նչ կասես, որ անեմ...

– Ինչ ունեմ, որ ինչ տամ: Պիտի երկու ամսում վերջացնես ու ինձ զեկուցես:

Կաշառքագետը գլուխը քորեց, չափեց-ձեւեց ու.

– Եկեք կաշառք վերցնող պաշտոնյաների աշխատավարձը բարձրացնենք, որ աչքերը կշտանա՝ գուցե քիչ վերցնեն, կամ իսկի չվերցնեն...

– Բոլոր կաշառակերների աշխատավարձե՞րը... Էդքան փող որտեղի՞ց: Գիշեր-ցերեկ փող տպենք, էլի չի հերիքի...

– Չէ՛, միայն մեծ կաշառք վերցնողների աշխատավարձերը...

– Իսկ եթե բան դուրս չեկա՞վ:

– Եթե չեղա՛վ, էլի կբարձրացնենք, էլի էնքան, մինչեւ էլ բանկում ոչ մի կոպեկ չմնա, ուրիշները աշխատավարձ չստանան ու չկարողանան կաշառք տալ, եւ էս հարցն ինքն-ինքն լուծվի... ■



ՖՈՒՏԲՈԼ

ՀՀ բարձրագույն խմբի առաջնություն

8-րդ տուր

1-ին ենթախումբ

ՀՄԸՄ – ՀՄՄ-ՖԻՄԱ 2:0, «Նաիրի» – «Արարատ» 0:1, «Նիգ» – «Մալաթիա» 0:2, «Սյունիք» – «Ախթամար» 2:1, «Զորավան» – «Լոռի» 4:2, «Ալաշկերտ» – «Բանանց» 0:3

2-րդ ենթախումբ

«Կոտայք» – «Պահածոյագործ» 2:0, «Կիլիկիա» – «Կանազ» 3:2, «Ջվարթնոց» – «Վան» 2:1, «Արաքս» – «Քասախ» 0:2, «Շիրակ» – «Իմպուլս» 3:0, «Կոշկագործ» – «Դեբեդ» 3:1

Առաջնության աղյուսակները մայիսի 16-ի դրությամբ

1-ին ենթախումբ	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. «Բանանց»	8	5	3	0	18-2	13
2. «Արարատ»	8	5	2	1	24-7	12
3. ՀՄԸՄ	7	4	3	0	16-5	11
4. «Սյունիք»	8	4	2	2	17-14	10
5. ՀՄՄ-ՖԻՄԱ	8	4	2	2	10-9	10
6. «Մալաթիա»	7	3	3	1	14-8	9
7. «Նաիրի»	8	3	2	3	7-8	8
8. «Զորավան»	6	2	0	4	6-9	4
9. «Ախթամար»	8	2	0	6	5-16	4
10. «Նիգ»	8	2	0	6	5-21	4
11. «Լոռի»	8	1	2	5	9-15	4
12. «Ալաշկերտ»	8	1	1	6	12-29	3
2-րդ ենթախումբ						
1. «Շիրակ»	8	6	2	0	16-0	14
2. «Կիլիկիա»	8	6	1	1	28-5	13
3. «Կանազ»	8	5	1	2	19-10	11
4. «Կոտայք»	8	4	3	1	20-6	11
5. «Վան»	8	4	2	2	19-6	10
6. «Քասախ»	8	4	2	2	6-5	10
7. «Ջվարթնոց»	8	2	5	1	11-9	9
8. «Կոշկագործ»	8	3	2	3	10-11	8
9. «Իմպուլս»	8	2	0	6	8-16	4
10. «Պահած.»	8	1	1	6	4-15	3
11. «Արաքս»	8	0	2	6	3-28	[illegible]
12. «Դեբեդ»	8	0	1	7	6-39	1

Բաժինը վարում է ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Մարդը եւ նրա իրավունքները

◆ Մարդու եւ նրա իրավունքներին մոտիկ կանգնած մի պատգամավոր հիմնել է Գերագույն խորհրդից երկու «ժիգուլի» ստացածների ակումբ: Հանրապետությունում իր տեսակի մեջ եզակի այս ակումբի միակ անդամը խոստացել է մինչեւ տարվա վերջ բարելավել իր անձնական ցուցանիշը:

◆ «Էմնիստի ինտերնեյշընըլ»-ի վաշինգտոնյան գրասենյակում տեղի է ունեցել միջազգային համաժողով, նվիրված նախագահական ընտրությունների նախօրյակին Պառավախարի զարհուրելի իրադարձություններին: Համաժողովի մասնակիցները դիմել են աշխարհի բոլոր երկրներին ու միջազգային կազմակերպություններին, կոչ անելով սանկցիաներ կիրառել մարդու իրավունքները ոտնահարող երեւանյան վայրագ վարչակազմի դեմ:

◆ Սկոտլանդ[illegible]արդի հովանավորությամբ Մանչեստրում անցկացվող ամենամյա խորհրդաժողովում սենսացիոն ելույթ է ունեցել հարավային Եւրոպայի երկրներից մեկի ներկայացուցիչ Մարուխ Բարուխյանը: Ելույթը նվիրված էր միջազգային մաֆիայի գործունեությանը արեւելյան հետամնաց երկրներից մեկում, ուր այնքան հմուտ էին կազմակերպվել նախագահական ընտրությունները, որ կլանների կաշառված ներկայացուցիչը կարողացել էր ստանալ ձայների ավելի քան ութսուն տոկոսը:

◆ Արեւմուտքի մի շարք ոչ պաշտոնական աղբյուրներ հայտնում են, որ նշանավոր պոռնոաստղ Լուիջի Վերոնիկե Չիկոնեն (հանրապետության ռուսալեզու բնակչությանը նա ծանոթ է Մադոննա անունով) դիմել է Հայաստանի Հանրապետության երիտասարդ թերթերից մեկի խմբագրին՝ առաջարկելով նրան դառնալ Լաս Վեգասում հուլիս ամսին [illegible] իր պոռնոշոուի իմպրեսարիոն: Սիրո ինդուստրիային մոտ կանգնած շրջանակներում տարակուսանք առաջացրած իր [illegible] որոշումը Մադոննան բացատրել է վերոհիշյալ անձնավորության անձնուրաց գործունեությամբ, որն ուղղված է երրորդ աշխարհի երկրներում ազատ եւ ոչ մի պայմանականություններով չկաշկանդված ինչպես տարատեսակ, այնպես էլ միասեռ սիրո քարոզմանը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՈՅԱՆ
Այս անվան տակ ոչ ոքի չփնտրեք

Ստամբուլցական

ՎԵՐՋԱՊԵՍ

Կատարվում է Խաչիկ Ստամբուլցյանի երազանքը՝ Հայաստանում աննախադեպված են ապրում Գթության կարիք ունեցողները:

ԺԱՄԱՆԱԿՆ Է

Գերագույն խորհրդի նախագահությունը առաջարկություն է ստացել այն մասին, որ անհրաժեշտ է «Աղետի գոտու եւ փախստականների հարցերի» հանձնաժողովը վերանվանել «Գթության հարցերի» եւ նրան հանձնարարել «Ողորմության» օրենքի եւ «Մուրացկանների» կարգավիճակի մասին որոշման մշակումները:

ՁԱՅՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Փարիզում Հայկական դեսպանատան առջեւ տեղի է ունեցել բազմամարդ ցույց, ցուցարարները վանկարկել են «Ձեռքներդ հեռու Խաչիկից»:

Քաղաքական այս ակտը լրիվ նկարահանվել է եւ շուտով կցուցադրվի «Գթության» կողմից վարձակալված կինոթատրոններում:

ՊԱՏՎԻՐՎԱԾ Է ՖԻԼՄ

Նկարահանվում է փաստավավերագրական ֆիլմ «Ստամբուլցյանի ունեցվածքը» վերնագրով: Այն ցու[illegible] դրված բոլոր սեղանիկների վրա առանձնացված տեղերում:

ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿ

«Այս տանը ապրել եւ շարունակելու է ապրել ([illegible] տան հերն էլ անիծած) իր բնակարանում արտասահմանյան ոչ մի իր չունեցող 20-րդ դարավերջի հայտնի աստվածավախ գործիչ «Փակող Բացողը»:

Շաղի նամակին սպասող՝
ՀՈՎՍԵՓ ՎԱՆՈՒՆՑ

Հակահեղափոխական մտորումներ

◆ «Աջությունը որպես կոմունիզմի ծերունական հիվանդություն» աշխատությունը որոնում է իր հեղինակին: Տեղեկություններ ունենալու դեպքում դիմել մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի շենքի պահակին՝ նույն ինքը ՍՄԿԿ պատմության նախկին դասախոս Վլադիլեն Մելսյանին:

◆ Մի ժամանակ ժողովուրդը երկրի տերն էր, ղեկավարները ժողովրդի ծառաներն էին: Ժողովուրդն իր ծառաներին տիրություն չէր անում, եւ երկրում անտերություն էր: Հիմա կա Տերություն, երկրի տերը ժողովրդավարներն են, որոնք վարում են ժողովրդի եղեգնափողը, իրենց վրայից «ցանում են» հայցվորներին, եւ դարձյալ անտերություն է: Պարզվում է, որ ե՛ւ առաջ, ե՛ւ հիմա անտերությունն էր երկրի տերը: Փառք նախկին Միության սահմանապահ զորքերին, թե չէ՝ եղած-չեղածը գրիվ պիտի գար, եւ անտերությունից էլ պիտի զրկվեինք:

◆ Ո[illegible]զգուշացրել մեռնելուց: Թաղման ծախսերը շատ են թանկացել:

Ննջեցյալ լինելու առավելություններից մեկն այն է, որ գերեզմանատուն չեն տանելու հասարակական տրանսպորտով:

◆ Հարկավոր է պետականացնել խելքն ու խիղճը եւ ազատ արձակել հասարակ մարդու հույսի եւ համբերության գները:

Մտորումների առաջնորդ՝
ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հայաստանն ստորագրեց կոլեկտիվ անվտանգության պայմանագիր

Սկիզբը 1-ին էջում

հաննիսյանն ասաց, որ Տաշքենդի հանդիպումը կդառնա Համրակցության հետագա գործունեության ուղեցույց: Իսկ դեռ օդակայանում լրագրողների համար տրված հարցազրույցում անդրադառնալով աշխաբադյան հանդիպմանը, որին մասնակցել էին միջինասիական բոլոր հանրապետությունները, Տեր-Պետրոսյանը դրականորեն գնահատեց այն եւ նշեց, որ Տաշքենդի հանդիպումը կդառնա ԱՊՀ անդամ երկրների համագործակցության նոր փուլի սկիզբ եւ կփորձի մշակել այն մեխանիզմները, որոնց համաձայն կիրականացվեն ԱՊՀ խորհրդի կողմից ընդունված որոշումները:

Ժամը 17-ին Կինոյի տանը կայացավ մամուլի ասուլիս: Նշվեց, որ քննարկումների հիմնական նյութ է դարձել 13 հարց ԱՊՀ շրջանակներում ֆինանսական հնարավորությունների, պարտքերի մարման, օդային տարածությունների օգտագործման, տիեզերական համակարգերի վերահսկման, սահմանապահ զորքերի կարգավիճակի, քիմիական զենքի, զինված ուժերի կրճատման, կոլեկտիվ զինված ուժերի կարգավիճակի, նախկին Խ. Միության ունեցվածքի ժառանգորդության եւ դիտորդների կարգավիճակի հարցերը:

Ներկաների ուշադրությանն արժանացավ կոլեկտիվ անվտանգության հարցը, որի վերաբերյալ 6 պետությունների կողմից ստորագրվել է պայմանագիր: Պայմանագիրն ստորագրել են Ռուսաստանը, Ղազախստանը, Հայաստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը: Ինչպես մեզ հաղորդեց Րաֆֆի Հովհաննիսյանը, կոլեկտիվ անվտանգության պայմանագրի քննարկման ժամանակ Ադրբեջանն առաջարկել է, որ նշվի ոչ միայն արտաքին անվտանգությունը, այլեւ ներքինը՝ մեջ բերելով Հայաստանի կողմից իբր իրականացվող ագրեսիան: Սակայն նիստի մասնակիցներն անուշադրության են մատնել հարցադրումը: Պայմանագրի կարեւոր կետերից է այն, որ եթե ԱՊՀ անդամ երկրներից որեւէ մեկի նկատմամբ կիրառվի ագրեսիա, ապա ԱՊՀ պետությունների ղեկավար խորհուրդը կարող է որոշել, որ ագրեսիան ուղղված է նաեւ ԱՊՀ-ի դեմ: Մամուլի ասուլիսում նշվեց, որ քննարկվող բոլոր հարցերի վերաբերյալ խորհրդակցության մասնակիցները ցուցաբերել են դրական վերաբերմունք, բացառությամբ մի քանի հարցերի: Ըստ հավաստի աղբյուրների, Ղարաբաղի խնդրի հետ կապված ոչ մի հարց հանդիպման օրակարգ չի մտցվել եւ չի քննարկվել:

Լրագրողներից մեկի այն հարցին, թե արդյոք Մութալիբովի վերադարձով կվերականգնվի՞ բանակցությունների ընթացքը, Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը պատասխանեց. *«Ինձ թվում է, որ Մութալիբովի վերադարձով ոչինչ չի փոխվի, քանի որ ինչպես առաջ, այնպես էլ հիմա, Մութալիբովը չունի այն սոցիալական բազան, որը նրան թույլ կտա վերահսկել իրադրությունն Ադրբեջանում: Նա չի կարող չենթարկվել ընդդիմության ազդեցությանը»:*

Նազարբաեւը Մութալիբովի վերադարձին դրական գնահատական է տվել եւ հայտարարել, որ ԱՊՀ երկրների ղեկավարները կցանկանային նրան տեսնել հաջորդ հանդիպումների ժամանակ: Ասուլիսի վերջում, երբ նախագահողը ցանկանում էր եզրափակել այն, հանկարծ ձայն խնդրեց Ուզբեկստանի նախագահ Քարիմովը եւ անդրադառնալով Մութալիբովի վերադարձին, նշեց, որ յուրաքանչյուր պետություն եւ ժողովուրդ պետք է հավատարիմ մնա ժողովրդավարության սկզբունքներին եւ ձեռնամ փորձարելով չտապալի օրինականորեն ընտրված նախագահին:

ԱՊՀ երկրների ղեկավարները հեռագիր են հղել Տաջիկստանի ղեկավար Նաբիեւին եւ տաջիկ ժողովրդին՝ իրենց խորը ցավակցությունը հայտնելով տարերային աղետին զոհ դարձած 140 խաղաղ բնակիչների, մի քանի գյուղերի հիմնահատակ ոչնչացման կապակցությամբ:

Կառավարությունների մակարդակով հաջորդ հանդիպումը տեղի կունենա հունիսի 26-ին, Մինսկում, իսկ պետությունների ղեկավարներինը՝ հուլիսի 6-ին, Մոսկվայում: ■

Թորգոմ Պատրիարքը այցելեց «Ազգ»

Մայիսի 14-ի կեսօրին «Ազգ»-ի խմբագրություն այցելեց Երուսաղեմի Պատրիարք Գերշ. Թորգոմ արք. Մանուկյանը: Պատրիարք հորը ընդունեցին ՀՌԱԿ հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը եւ «Ազգ»-ի խմբագիր Հակոբ Ավետիքյանը:

Մեկ ժամ տեւած զրույցի ընթացքում խոսվեց ազգային-եկեղեցական հարցերի, հայրենիք-սփյուռք հարաբերությունների, Երուսաղեմի հայոց պատրիարքության կալվածային եւ այլ իրավունքների մասին:

Վերջին օրերին խմբագրություն էին այցելել նաեւ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Աղան եպս. Պալիոզյանն ու Հունաստանի թեմի առաջնորդ Ոսկան եպս. Ե. Կալթաքյանը: Թորգոմ սրբազանը, իր հերթին, ծանոթացավ Հայաստանում քաղաքական իրավիճակի եւ Արցախում վերջին զարգացումների մասին ՀՌԱԿ-ի տեսակետներին: ■

Լուրերի

Ծեծկռտուք խորհրդարանու

Հինգշաբթի օրը իտալական խորհր դարանի նիստում պատգամավորներն անարգական խոսքեր եւ բռունցքի հարվածներ փոխանակեցին միմյանց հետ նախագահական ընտրություններ անցկացնելու ձախողված փորձերից հետո: Նեոֆաշիստների եւ քրիստոնյա-դեմոկրատների միջեւ հարաբերությունները վերջին շաբաթներին սրել էին արդեն կաշառակերության գայթակղալից պարագաների բացահայտումով: ■

Իրաքն արգելում է

Իրաքը դատապարտեց վաղը երկրի քրդաբնակ շրջաններում տեղի ունենալիք ընտրությունների որոշումը եւ արգելեց դրանք: Քուրդ ղեկավարները հայտարարեցին, որ իրաքյան զինվորները ստացել են հրահանգ ընտրություններին մասնակցելու դեպքում ռմբակոծել քրդական գյուղերը: Երեկ իրաքյան զինվորները սպանել են 11 քուրդերի: ■

Ռաշիդ Սոլհը կազմելու է նոր կառավարություն

Վարչապետ Օմար Քարամեի հրաժարումից մեկ շաբաթ հետո Լիբանանի հանրապետության նախագահ Էլիաս Հրաուին Ռաշիդ Սոլհին հանձնարարեց նոր կառավարություն կազմելու գործը: Վերջինս լիբանանյան անկախության կերտիչներից Սամի Սոլհի որդին է: Ռ. Սոլհը նախապես երեք անգամ եղել է վարչապետ: ■

Քաղցկեղի ժառանգական տեսակները

Քաղցկեղի հետազոտությամբ զբաղվող ամերիկյան մասնագետները գտել են, որ որոշ հիվանդներ, իրոք, ժառանգել են հիվանդությունը: Ստուգելով նրանց մոտիկ հարազատների արյունը, գիտնականները բացահայտել են, որ նրանք գենետիկորեն հակամետ են քաղցկեղի: ■

Լուրերը interfax-ի, «[illegible]»-ի եւ մեր այլ թղթակիցների

Բաքուն քաղաքացիական պատերազմի շեմին

Ինչպես արդեն հայտնի է, մայիսի 14-ին Ադրբեջանի խորհրդարանի որոշմամբ նախագահի պաշտոնին վերականգնված Այազ Մութալիբովը հաջորդ օրն իսկ Բաքվում մտցրեց արտակարգ դրություն եւ պարետային ժամ: Արգելվեցին բոլոր ցույցերն ու հանրահավաքները, սահմանափակվեցին մամուլի ազատությունը եւ տեղաշարժը, մայրաքաղաք մուտքն ու ելքը իրականացվում էր միայն հատուկ անցաթղթերով: Բացի այդ, սահմանափակվեցին քաղաքական կուսակցությունների գործունեությունը, արգելվեցին քաղաքացիական անհնազանդության բոլոր միջոցները, մասնավորապես, գործադուլները:

ԱԺՃ-ն, Այազ Մութալիբովի վերականգնումը գնահատելով որպես «պետական հեղաշրջում», բնակչությանը քաղաքացիական անհնազանդության կոչ արեց:

ԱԺՃ-ի ղեկավարությունը հայտնեց, որ եթե իշխանությունները որեւէ բռնի գործողություն ձեռնարկեն ճակատի դեմ, հակահարված կստանան: Բաքվում տեղակայված ԱԺՃ-ի ղեկավար կայանի մոտ մայիսի 15-ի ամբողջ գիշերը շարունակվում էր ընդդիմության հանրահավաքը, որին մասնակցում էր 10 հազար մարդ: Երեկ առավոտյանից շարունակվում էր մարդկանց հոսքը դեպի ղեկավար կայանի շենքը: Հանրահավաքում ելույթ ունեցավ ԱԺՃ-ից խորհրդարանի անդամ Իսկանդեր Համիդովը: Նա հայտարարեց, որ *«Ա. Մութալիբովի գլխավորած հանձնախումբը պետք է հեռանա քաղաքական ասպարեզից որպես ամոթալի, խայտառակ կառուցվածք»:* Նրա խոսքերով, եթե դա տեղի չունենա, ապա ԱԺՃ-ը *«կսկսի շարժումը»:* Նա չբացատրեց, թե այդ ասելով ինչ նկատի ուներ:

Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայության ղեկավար Ռասիմ Աղաեւը «ԻՖ»-ին տված հարցազրույցում քաղաքացիական անհնազանդության մասին ԱԺՃ-ի կոչը գնահատեց որպես *«գործողություններ, որոնք միայն սրում են իրավիճակը, պառակտում ուժերը եւ թուլացնում Հայաստանի հարձակմանը դիմակայելու հանրապետության ջանքերը»:*

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ չեզոք դիրք է ընդունում հանրապետությունում ծավալվող քաղաքական պայքարում:

Միեւնույն ժամանակ, Երեւանը, վկայակոչելով Հայաստանի սահմանամերձ շրջաններում գտնվող ինքնապաշտպանության ջոկատների հաղորդագրությունները, հայտնեց, թե մայիսի լույս 15-ի գիշերը Ադրբեջանի Ղազախի, Թոուզի եւ Ղուբաթլիի շրջաններում լսվում էր փոխհրաձգություն, ինչպես ենթադրում են Երեւանում, ԱԺՃ-ի ջոկատների եւ իշխանությունների կողմնակիցների միջեւ:

Մութալիբովը քաշում է դեպի Ռուսաստան

Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը կոչ արեց ժողովրդին համախմբվել ճգնաժամի ընթացքում, ինչը կապված է Լեռնային Ղարաբաղում մարտական գործողություններում կրած անհաջողությունների հետ: Ելույթ ունենալով մայիսի 14-ին կայացած Գերագույն խորհրդի արտակարգ նիստում, նա նշեց, որ Ադրբեջանը կորցրել է Խոջալուն եւ Շուշին քաղաքական վրիպումների հետեւանքով, մասնավորապես, հանրապետությունը չի աջակցել ԱՊՀ ռազմական կառուցվածքներին:

Ա. Մութալիբովը հայտարարեց, որ անհրաժեշտ է Ռուսաստանի հետ կնքել երկկողմանի պայմանագիր: Նրա խոսքերով, եթե Ադրբեջանը ռազմական հարցերով առճակատման մեջ չլիներ Ռուսաստանի հետ, Շուշին չէր կորցնի: Նախագահը դիմեց Նախիջեւանի ղեկավարությանը եւ անձամբ Հեյդար Ալիեւին կոչ անելով *«մոռանալ հին վիրավորանքները եւ հաստատել բարեկամական հարաբերություններ»:* ■


Շտապեցէք մասնակցել բարեգործական խաղարկությանը
LOPER'S
ATION
LE LOTTERY
VOLVO, TAVRIYA, COMPUTER etc
PETROSSIAN & COMPANY
K/№
PETROSSIAN & COMPANY
K/№

Հանրապետության ճանապարհների շինարարության եւ դպրոցների վերանորոգման գործում մեծ լուման ունենալու լավագույն հնարավորություն է ընձեռում «զարգացման համաստեղ ուղիներ» ամերիկյան կորպորացիան իր իսկ նախաձեռնած դրամաիրային վիճակախաղով: Հունիսի 20-ին Հանրապետության հրապարակում անցկացվող տասներկուժամյա համերգ-մարաթոնի ընթացքում կվիճարկվեն շուրջ քսանհինգ միլիոն ռուբլու խաղարկումներ՝ մեկ «Վոլվո» մակնիշի եւ երկու «Տավրիա» ավտոմեքենա, երկու «Այ Բի Էմ» անհատական կոմպյուտեր, 400 արտասահմանյան երկկասետանի [illegible] Ֆեյսներով մագնիտոֆոն, 800 հոլանդական մարզահագուստ եւ հազար հաս մինչեւ 500 ռուբլի դրամային շահույթ: Կվիճարկվի նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգներ այցելելու երկու հրավեր: Խաղարկման ամբողջ շահույթը կիրացվի հանրապետությունում: Դրա հիսուն տոկոսը տրամադրվելու է վերոհիշյալ ձեռնարկումներին, մյուս կեսը՝ Արցախի, աղետի գոտու եւ սոցիալական ապահովության ցավերը հոգալուն: Վիճակախաղի տոմսերն արժեն 27 ռուբլի 50 կոպեկ, որոնք կարող եք ձեռք բերել հանրապետության պետական եւ կենտրոնական հանրախանութներում, կոմիսիոն խանութներում, սպորտլոտոյի կրպակներում, կամ դրանք ձեզ կհասցնեն կազմակերպության կողմից լիազորված աշխատակիցները:

«ՀայՀամակարգիչի» հերթական անակնկալը. «...21...»



Հանրապետության ծայրաստիճան քաղաքականացված մամուլի խճանկարը ավելացավ եւս մեկ՝ «...21...» անունը կրող ուսանողական-երիտասարդական շաբաթաթերթով, որը, սակայն, հավակնում է հեռու մնալ կուսակցական ու քաղաքական կրքերից ու խաղերից, նախապաշարումներից ու հեղինակություններից: Արդեն առաջին համարի խմբագրականում շաբաթաթերթի հեղինակները խոստանում են, որ «21»-ը կփորձի դառնալ ուսանողության խոսափողը, նրա շահերի արտահայտիչն ու պաշտպանը: Թե որքանով դա կհաջողվի՝ ժամանակը ցույց կտա, բայց արդեն լույս տեսած առաջին երկու համարները վկայում են, որ թերթի հեղինակներն իրենց հռչակված նպատակներին հասնելու մեծ հնարավորություններ ունեն: Հրատարակված նյութերն աչքի են ընկնում թեմատիկայի խիստ բազմազանությամբ եւ ուսանողության ու երիտասարդության հուզող հարցերի լայն ընդգրկումով: Կասկած չկա, որ եթե հայ ուսանողությանն ընդհանրապես [illegible] հետաքրքրելու է, ապա դա անպայման տեղ կգտնի շաբաթաթերթի էջերում:

Ի դեպ, «...21...»-ը գունավոր է եւ միայն սրանով իսկ արդեն երեւույթ է այսօրվա հայ մամուլի պատմության մեջ: Անշուշտ, սա մեծ հնարավորություններ կտա շաբաթաթերթին՝ դիմանալու օրեցօր սաստկացող մրցակցությանը:

Ինչ վերաբերում է թերություններին, ըստ իս, դրանց մասին խոսելը դեռ շուտ է: Շաբաթաթերթը միայն առաջին քայլերն է կատարում եւ, անշուշտ, ժամանակի ընթացքում կվերացնի մանր ու մեծ բոլոր թերությունները: Թերթի հրատարակությունը նախաձեռնել է «ՀայՀամակարգիչ» կենտրոնը:

Մեզ մնում է միայն բարի երթ մաղթել «...21...»-ին եւ հուսալ, որ այն իսկապես կդառնա ուսանողության ու երիտասարդության անբաժան ուղեկիցը:

Ա. Բ.

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010
Խմբագիր՝ Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ
Editor H. AVEDIKIAN
Macintosh համակարգչային շարուածքը
Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնի
ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր
«Պարբերական» հրատ. տպարան, Արշակունեաց 2